




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Բ. ՍԵՄԿՈՎ

ИНСТИТУТ
ВОСТОЧЕДОВЕДЕНИЯ
и этнологии
СССР

ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ ՓՈՐՁՆԱԿԱՆ
Մ Ո Ր Ի Լ Ի Զ Ա Ց Ի Ա Ց Ի Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

374.3

U-38

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՈՏԻ
ԹԵՐԵՎԱՆ 1932

374.3

4-38

Р. 068404

MAR 20 1982 32-1
A 100

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ ՓՈՐՁՆԱԿԱՆ
ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԵՂ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ
ՅԵՐԵՎԱՆ. 1982

Պատերազմի արձանագրություն
 Նշանակում 7119 (Բ)
 Պատվեր 61
 Տիրույթ 1500



S9571-66

Թարգմ. 1. Ա.

Հանձնված է սպագրություն 1/1 1932 թ. ՍՖ. Բ. Ա.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՌՆԱԼԻԲԸ

Աճում ու ամրանում է Սորհրդային Միությանը: Որ որք
 վրա ավելի լայն է ծավալվում սոցիալիստական շինարարությու-
 նը: Արտադրության մեջ են մտնում արդյունաբերական նոր հե-
 լաներ—ֆարրիկաներ ու գործարաններ: Զեռնարկություն ձեռ-
 նարկության հետևից աշխատանքային 7-ժամյա օրվան են անց-
 նում: Բուռն կերպով աճում են կոլտնտեսությունները, խորհ-
 տնտեսությունները և մեքենա-տրակտորային կայանները: Հան-
 րայնացված օեկտորը դյուղօսանտնտեսության սոցիալիստական վե-
 րակերտման ավելի ու ավելի հզոր լծակ է դառնում: Մեղեղորեն
 բարեխաղվում է բանվորի ու գյուղացու նյութական դրություն-
 նը:

Միլիոնավոր աշխատավորներ կոմունիստական կուսակցու-
 թյան ղեկավարությամբ սոցիալիստական մրցակցության մեջ
 են մտնում և հաջողությամբ իրականացնում են «մեծ աշխատանք-
 ների» հեղափոխական պլանը:

Աշխարհում առաջին պրոլետարական պետության սոցիալիզ-
 տական նվաճումները հեղափոխականացնում են կապիտալիստա-
 կան յերկիրների բանվոր դասակարգը և Արևելքի ճնշված ժողո-
 վուրդներին, վողեորում են նրանց դասակարգային կռիվ մեջ,
 վորը նոր ուժով ծավալվում է ամբողջ աշխարհում: Սորհրդա-
 յին Միության որինակն ու փորձը համաշխարհային բանվոր դա-
 սակարգին ու Արևելքի հարստահարված ժողովուրդներին վստա-
 հություն է ներշնչում իրենց հաղթանակին:

Իմպերիալիստներն ապում են իՍՂՄ և վախենում են նրա
 աճող քաղաքական ու տնտեսական հզորությունից: Նրանք շատ լավ
 հասկանում են, վոր սր սրի վրա նրանցից ավելի ու ավելի հե-
 ոանում է համեղ պատառը—իՍՂՄ բնական հարստությունները:
 Իմպերիալիստներն ապում են սրում աշխատավորների սոցիալիզ-
 տական հայրենիքի համար, աչքները չորս են արել, վոր մի կերպ
 նրան բուռը հավաքեն, խեղդեն, մարեն համաշխարհային հեղա-
 փոխության օջախը:

Խաղաղության ժառանգյալ յերդ և վոր յերգելով՝ կապիտալիստներն ու սոցիալ-Ֆաշիստներն իրականում ուժեղացնում են ցամաքային ու ծովային սպառազինությունը, լայնացնում են կուլիքմիական միջոցների և վոչնչացման ու ավերածության այլ դործիքների արտադրությունը։ Բուրժուազիան դրա հետ մեկտեղ աշխատում է իր յերկիրների աշխատավոր մասսաների դիտակցությունը թունավորել չովինիստական ագիտացիայով, ուժեղացնում է բանվոր դասակարգի հալածանքը և կապիտալիստական ճնշումը գաղութներում։ Այդ բոլորն արվում է, վորպեսզի ամրացվի իր դրությունը և պատերազմ նախապատրաստվի ԽՍՀՄ դեմ։ «Սպառազինումների կատաղի աճումն իմպերիալիզմի յերկիրներում և ռազմա-քաղաքական նոր միությունների (Անգլիա-Ֆրանսիա, Անգլիա-Յապոնիա, Ֆրանսիա-Լեհաստան) կադմուսը մի ավելորդ անգամ վկայում է նոր իմպերիալիստական պատերազմի—եւ ավելի վիթխարի ու ավերիչ, քան 1914—1918 թվերի պատերազմն էր—մերձեցումը։ Նոր համաշխարհային իմպերիալիստական պատերազմի սպառնալիքը յերբեք այնպես սուր չի յեղել, ինչպես ներկայումս» (ԿիԳԿ X պլենումի թեզիսներ)։

Պատերազմի առանձնատրեւ տենդորին պատրաստվում են ԽՍՀՄ սահմանակից պետութայնները։

Լեհաստանն ու Ռումինիան ռազմական համաձայնութայններ են կնքել։ Ֆրանսական գլխավոր շտաբը մեծ ջանքեր է թափում բարեկամելու լեհական ու ռումինական բանակների մարտական պատրաստութայնը։ Իմպերիալիզմը պրովոկացիոն յելույթներ է կազմակերպում ԽՍՀՄ դեմ—Չ.—Ա. յերկաթգծի հափքչտակումը, սպիտակ-բուխարական բանդաների հարձակումը խորհրդային—ավղանական սահմանում և այլն։

Խորհրդային Միութայնը պատերազմի պրովոկացիայի յենթարկելու իմպերիալիստների փորձերը մեր յերկրի աշխատավորների միահամուռ հակահարվածին են հանդիպում։

Պատերազմի սպառնալիքին աշխատավորները պատասխանում են ԽՍՀՄ պաշտպանունակութայնը ամեն կերպ ամրացնելով։ Չինական սպիտակ բանդիաների լալիք մարտահրավերին ամբողջ յերկրովը մեկ անցավ մասսայական բողոքի հզոր ալիքը Չ.—Ա. յերկաթգծի հափքչտակիչների խժգժութայնների դեմ։ Աշխատափրներն ուժեղացնում են մասհանումները ինքնաթիռներ ու տանկեր շինելու համար։ Ուժեղանում է ինդուստրացման 3-րդ փոխառութայն բաժանորդագրութայնը։ Աշխուժանում ու ամրա-

պնդվում է ՊԱՋԸ—Ավիաքիմի և Կարմիր խաչի բժիշների աշխատանքը։ Գյուղացիները նոր բերքի առաջին խուրձերը պաշտպանութայն ֆոնդին են հասկացնում։ ԽՍՀՄ քաղաքների և գյուղերի միլիոնավոր աշխատավորներ պատրաստակամութայն են հայտնում ամեն գոհարերութայն անելու Հոկտեմբերի նվաճումների պաշտպանութայն համար, Խորհրդային Միութայն—բոլոր աշխատավորների հայրենիք—հզորութայնն ամրապնդելու համար։

ԽՍՀՄ և ամբողջ աշխարհի աշխատավորները բաղմիցս հետաքալարութայն են ունեցել հավաստիանալու խորհրդային կառավարութայն և կոմունիստական կուսակցութայն խաղաղ քաղաքականութայնը։ Ամենքին հայտնի յե, վոր հենց խորհրդային կառավարութայնն է առաջարկել լիովին կամ գոնե մասնակի դիտաթափումը։ Այդ առաջարկները մերժել են բուրժուական կառավարութայնները և նրանց լակեյ սոցիալ-դեմոկրատները։ Այդ կերպ չի եւ կարող լինել։ Իմպերիալիստները շահագործված են, վոր իրենց յերկիրներում աճող հեղափոխութայնը խեղդեն։ Իմպերիալիստները շահագործված են, վոր վիժեցնեն սոցիալիստական հանող շինարարութայնը Խորհրդային Միութայն մեջ, խեղդեն համաշխարհային հեղափոխութայն ոջախը, վորպիսին ԽՍՀՄ-ն է։

Խորհրդային Միութայն աշխատավորները պատերազմ չեն աղում։ Բայց յուրաքանչյուր բանվոր ու գյուղացի շատ լավ հասկանում է, վոր քանի դեռ աշխարհում կապիտալիզմը գոյութայն ունի, պատերազմն անխուսափելի յե։ Ռազմական վտանդը կանցնի միմիայն կապիտալիզմի տապալումից և ամբողջ աշխարհում պրոլետարիատի դիկտատուրա հաստատվելուց հետո։

Ուստի և խորհուրդների ամբողջ յերկիրը, ամեն մի աշխատավոր պետք է միշտ պատրաստ լինեն սոցիալիստական շինարարութայն դեմ չարամաութայնը զինված հակահարված տալու։

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄՈՒԻԼԻԶՄՑԻԱ

Իսկ պատերազմի պետք է պատրաստվեն ամենքը և ամեն վոք, և պատրաստվեն վաղորդ, դեռևս խաղաղ ժամանակ։ Յեցր պատերազմը բռնկվի, պատրաստվելն արդեն ուշ կլինի։ Պատրաստվել պետք է հիմնավորապես, վորովհետև ժամանակակից պատերազմն իր հետ մեծ փորձութայններ ու դժվարութայններ էրերի։

Նոր պատերազմը 1914—1918 թ. թ. եմպերիալիստական սպանդից անհամեմատ ավելի բարդ ու դժվար կլինի: Ռադակալն-տեխնիկան կատարելագործվում է գրեթե ուր-ալուր: Ավիացիայի անձան հետ մեկտեղ ուսումնական գործողությունները տեղիում-ը իրան զգալապես մեծանում է: Ճակատն ու թիկունքը միաձուլ-վում են:

Ժամանակակից պատերազմը վաղ միայն ուղղակիան կենդա-նի ուժ է պահանջում, վորն անմիջորեն հարված է հասցնում հա-կառակորդի գործերին, այլև յերկրի բոլոր անտեսական ուժերի-լարում՝ հակառին անընդհատ կռվի միջոցներ, հանդերձանք, փոխադրամիջոցներ, աննպատկություն հայթայթելու համար: Ապա-քա պատերազմը կազանջի նույնպես, վոր մերձակառա լայն շերտի բնակչությունը կազմակերպված ղեմադրի յերկրի խորը ներսերը մայրող հակառակորդի ողային ու ջիմիական միջոցնե-րին: Յեթև դրան ավելացնենք նաև, վոր Ժամանակակից կապի-տալիզմը պահանջում է միլիոնավոր մասնաճեղների անմիջակա-ն մասնակցությունը ղեմաված կռվին և մեծ քանակությամբ ուսղմա-տեխնիկական միջոցներ, ապա պարզ կլինի, թե Խորհրդային Միությունը պատերազմի Ժամանակ ինչ դժվարություններ պետք է հաղթահարի պատակորդային թշնամու դեմ հաղթանակի լապա-հավելու համար, թե ուժերի ինչ լարվածությունը • կազանջվի յուրաքանչյուր քաղաքացուց՝ թե ճակատում կռվող և թե թի-կունքում մնացող:

Այն փոքրիկ քանակը, վոր մենք խաղաղ Ժամանակ ունենք, պատերազմ մղելու համար անբավարար կլինի: Կարելի կլինի բա-նակը միջանկյալատիկ մեծացնելու ի հաշիվ մորիլիզացիայի գորա-կոչվածների: Չենքի տակ կմանեն նոր հարյուր-հազարավոր բան-վորներ ու զյուղացիներ: Պատերազմ մղելու համար կպահանջվեն տասնյակ-հազարավոր ձիեր, գումակ ու լծասարք: Վերջապես, հարկավոր է թե բանակը և թե ժողովրդական անտեսությունը արագորեն փոխադրել պատերազմական Ժամանակի ունեների վրա, վորպեսզի ապահովվի հաջող պատերազմ մղելու հնարավորու-թյունը, բավարարվեն բանակի ուղղմանյութի, սպասարկման, հանդերձանքի, զինատանկություն կարիքները, լակ քաղաքա-ցիական ամբողջ թիկունքին դրանիտե կայունություն տրվի:

Յերկրի անցումը ուղղակիան դրության կոչվում է մորիլի-զացիա:

Մորիլիզացիան բարդ և ամենուպատասխանատու գործ է:

Յեթև մենք նրան չպատրաստվենք, յեթև չկարողանանք ամբողջ յերկիրն արագորեն ղեմաված ճամբարի դրության փոխել, մենք ավելի վատ դրության մեջ կլինենք, քան մեր թշնամին:

...«Ապագա մեծ պատերազմը մղողը կլինի ամբողջ յերկիրն իբ պետական ամբողջ ապարատով: Ուստի մենք հենց այժմ պետք է նշենք այնպիսի պայմաններ, վորոնք մեզ թույլ տային պատե-րազմի դեպքում ամբողջ ճակատով, և վոչ միայն ուսղմական, այլև քաղաքացիական ճակատով, միանգամից անցնել ուղղակիան դրության»*) —ասում էր ընկ. Ֆրունզեն: Աշխատավորներից վաղ մեկը չպետք է մոռանա այս ցուցումը:

Պատերազմի հաջողությունը շատ բանով կախված է հենց նրանից, թե ինչքան արագ և հաջողությամբ կանցկացնենք մո-րիլիզացիան: Թշնամին այդ հաշվի յե առնում: Նա մեր մորիլի-զացիան ավարտելուն չի սպասի: Նա կաշխատի ամեն ինչ անել, վորպեսզի կանխի մեզ, ավելի արագ ճակատ դուրս բերի ինչքան կարելի յե շատ զորք և սկսի կռվել մեր հողի վրա: Նրա համար նպատակավոր է մեզ վրա հարձակվել այն Ժամանակ, յերբ մենք պատրաստ չենք, վորպեսզի մեզ խանգարի մորիլիզացիա անել: Այն ել չի կարելի մոռանալ, վոր մորիլիզացիային կընթացակցի նաև դաստիարակային կռվի սրումը մեր յերկրում ևս:

Դասակարգային թշնամիները կաշխատեն մեր մորիլիզա-ցիան դժվարացնել վնասարարությամբ, հակահեղափոխական ագիտացիայով և յերկրյաներով:

Մորիլիզացիան մի գործ է, վորը խաղաղ Ժամանակ նախա-պատրաստական մեծ աշխատանք է պահանջում: Պետք է մեր քա-ղաքացիական ու ղրնիորական ապարատը ուղղորդեն մորիլի-զացիան կազմակերպված, ամենակարճ Ժամկետում վերջացնելու: Ֆուրաքանչյուր աշխատավոր պարտավոր է նույնպես առաջուց իմանալ, թե ինքն ինչ է անելու, յերբ մորիլիզացիա հայտարար-վի, վորպեսզի իր անձնական վարքով, որինակով նպաստի մորի-լիզացիայի հաջողությունը:

Այդ նախապատրաստման լավագույն միջոցն էլ հենց փորձ-նական մորիլիզացիան է: Այստեղ գրքերով չեն սովորում, այլ գործով: Փուրաքանչյուր կազմակերպություն, յուրաքանչյուր քաղաքացի դործնականում կատարում է այն ամենը, ինչ նրան-ցից ըստ մորիլիզացիայի պահանջվում է: Այսպիսով, ինչքան ուղեւ լավ կարելի յե ստուգել մեր հաշվարկների ու մորիլիզա-

*) М. В. Фрунзе.—«На на новых путях».

պատերազմի ու ռազմական վտանգի մասին ընդհանուր գաղափարներում :

Աշխատավոր բնակչության համար հատկանշալի դարձնել պատերազմի կոնկրետ նպատակներն ու պատճառները, այդ հիման վրա ստեղծել աշխուժ տրամադրություն և հեղափոխական վազեօրություն, դորակոչվողներին ու բնակչությանը համախմբել կուսակցության ու խորհրդային իշխանության շուրջը՝ ահա քաղաքական աշխատանքի առաջին խնդիրը :

Բայց այդ բնավ բավարար չէ : Պետք է, վոր բոլոր աշխատավորները գիտակցորեն և իր ժամանակին կատարեն իրենց անհատական պարտականությունները մոբիլիզացիայի հանդեպ : Ժամանակին ներկայանան հավաքակետը, վորոշված ժամանակին հիշող հանձնին ձիերն ու դուժակը, նույնպես ակտիվորեն ոժանդակեն իշխանության անհաղթան որդաններին ու կուսակցությանը կենսագործելու մոբիլիզացիային վերաբերող բոլոր միջոցառումները, — այս բոլորը միանգամայն անհրաժեշտ է ռազմական դրություն անցնելու հաջողության համար :

Աշխատավորների հասարակական կարծիք ստեղծել մոբիլիզացիայի ընթացքը կարճալուծող ու բարձրացնող ամեն տեսակ յերևույթների դեմ պայքարելու համար, ինչպես՝ հակախորհրդային տարրերի ու կուլակության հակահեղափոխական գործունեության ու աղիտացիայի, սուտ ու պրովոկացիոն լուրեր տարածելու, խուճաղ ստեղծելու և կարգը քայքայելու ձգտման, ձիեր ու լծասարք հանձնելու գործում սարսուտի, դատալիքների պարտակելու, չարաշահության և այլն, ողնություն կադմակերպել գորակոչվածների ընտանիքներին — ահա մոբիլիզացիայի քաղաքական սպահնություն հիմնական խնդիրների շրջանը :

Առաջուց վորոշել քաղաքական աշխատանքի կոնկրետ բովանդակությունը մոբիլիզացիայի ժամանակ՝ չի կարելի : Այդ կախված է պատերազմի սկսման մոմենտում ստեղծված քաղաքական (միջազգային և ներքին) իրադրությունից : Բայց ընդհանուր նշանաձողերը, գլխավոր ուղղությունները, վորոնց հիման վրա պետք է կառուցվի քաղաշխատանքի բովանդակությունը, կարելի չէ հիմա ել նշել : Ընդհանուր առմամբ այն կհանդի հարցերի հետևյալ խմբերին .

1) մոբիլիզացիայի պատճառները և մեր վիզը փաթաթած պատերազմի դատակարարային բնույթը .

2) խորհրդային իշխանության՝ մոբիլիզացիային վերաբերող բոլոր հրամանները (գորակոչվողների լրիվ, ժամանակին ներկայանալը, ձիեր, աշխակներ և լծասարք մատակարարելը և այլն) ճշտություն և իր ժամանակին կատարելը .

3) գորակոչվողներին, բնակազմի գինվորականներին և նրանց բնառնիքներին տրվող արտոնություններն ու առավելությունները .

4) պատվարության հանցադատությունը, ձիեր ու դուժակ մատակարարելուց խուսափումները, ինչպես և խորհրդային իշխանության ձեռք առած, դաժան միջոցները մոբիլիզացիային վերաբերող հրամանները չկատարողների նկատմամբ .

5) ռազմական դադանիքի ելույթները, այն դորակոչվողները ու բնակչության կողմից պահելու անհրաժեշտությունն ու յեղանակները, նույնպես և լրտեսության դեմ կռիվելու գործում իշխանության որդաններին ամեն կերպ ողնելու անհրաժեշտությունը .

6) քաղաշխատանքի միջոցներով վնասարարության դեմ կռիվը, սուտ ու պրովոկացիոն լուրերի, կուլակային, նեպոմանական և հակախորհրդային այլ տարրերի հակահեղափոխական աղիտացիայի մերկացումը .

7) չարաշահության, ապրանքների դներն ու պահանջը բարձրացնելու, ավանդները խնայողամարկղից հանելու դեմ մղած պայքարը .

8) աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխատանքային դիսցիպլինան ամրապնդելու, գորակոչվածների բնառնիքներին, կարմիր բանակի գորամասերին, նույնպես և չքավազան բնառնիքներին հասարակական ողնություն ցույց տալու անհրաժեշտությունը :

Այս բոլոր հարցերը հյուսվում են մեկը մյուսին : Խորհրդային Միության միջազգային ու ներքին դրության հարցերը պետք է ամենատեսրա կերպով չադկապված լինեն գորակոչվածի շահերի, պահանջների ու գործնական խնդիրների հետ : Պետք է կարողանալ գորակոչվածի ու բնակչության պարտականություններին վերաբերող յուրաքանչյուր հարցի տալ քաղաքական բարձրություն : Սրանում և մոբիլիզացիայի ժամանակի քաղաշխատանքի ազդ :

Ձինադարձների ժամանակին և ամենքի ներկայանալու և տերերի կողմից մոբիլիզացիայով ձիեր ու դուժակ մատակարար-

քելու հարցերը պետք է ամենաեղանակա՞ն տեղ բռնեն քաղաքական ամբողջ աշխատանքի մեջ: Ազխատացիոն լայն աշխատանքից դաս առնող ավելի, քան վորեւէ այլ տեղ, պահանջվում է ուզել գյուղացիներին մոբիլիզացիայի հայտարարութիւններից և դին-հաշվառման դանադան փաստաթղթերից բան հասկանալու: Փորձնական մոբիլիզացիաները դուրս են տվել, վոր բնակչութիւնն այդ գործի տեխնիկայից վատ է հասկանում: Անհրաժեշտ է խաղաղ ժամանակ լուծարել բնակչութիւն մոբիլիզացիոն անգրագիտութիւնը: Բայց հենց իսկական մոբիլիզացիայի ժամանակ էլ անպայման հարկ կլինի աշխարհի բացատրական աշխատանքով զբաղվելու: Գյուղացին, յետ խելքը բան էլ կտրի մոբիլիզացիայի հրամաններից, անպայման միջոցների անգամ կհարցնի սրանից-նրանից, թե ինքն արդյոք ներկայանալու չե թե վոչ, յերբ և ուր պիտի ներկայանա կամ ձին ու սայլակը տանի:

Բացատրելով մոբիլիզացիայի հարցերն ու ժամկետները, պետք է յուրաքանչյուր գյուղացու հասկացնել, թե իր հետ ինչ հետեանքներ է բերում զորակոչվածների անփութ վերաբերմունքը դեպի իրենց պարտականութիւնները, ինչպէս այդ բոլորը ջուր է լցնում դասակարգային թշնամու ջրաղացին, խորհրդային իշխանութիւնն ինչպիսի դաժան միջոցներ ձեռք կռնի գաղտնիքների, մատակարարումից խուսափողների և սլարտափողների նկատմամբ: Պետք է ձգտել այն բանին, վոր աշխատավորներն իրենք թույլ չտան նման գանցանքներ:

Զորակոչվածի ընտանիքի նշանակալի ապահովութիւնը, անաւետութիւն հետ ինչ կերպ վարվելը, հասարակութիւնը կողքի արդյոք թողած ընտանիքին, — ահա հարցեր, վորոնք կան հանգստացնեն զորակոչվածին: Թե ինչ կերպ կլուծվեն այդ հարցերը, դրանից շատ բանով կախված է այն տրամադրութիւնը, վորով զորակոչվածը բանակ կերթա: Պետք է իր ժամանակին բոլոր միջոցներով տեղեկացնել բնակչութիւնը, թե խորհրդային իշխանութիւնն ու գյուղական հասարակայնութիւնն ինչ միջոցներ են ձեռք առնում զորակոչվածների ընտանիքների առկա հովութիւն համար: Զորակոչվածը դեռ գյուղից դուրս գալուց առաջ պետք է վստահ լինի, վոր իր անտեսութիւնը և ընտանիքը մոռացութիւն չեն արվի վոչ իշխանութիւն և վոչ էլ հասարակայնութիւն կողմից:

Թե փորձնական և թե իսկական մոբիլիզացիայի ժամանակաշրջանում մենք կանգնած կլինենք դասակարգային կռիւի որման

փաստի առաջ: Կուլակային և հակախորհրդային այլ տարրերը պրովոկացիայի ու վնասարարութիւնն բոլոր միջոցները գործի կղենեն, վորպէսզի վիժեցնեն կուսակցութիւնն ու խորհրդային իշխանութիւնն միջոցառումները մոբիլիզացիայի հաջող ավարտման ուղղութիւնով:

Քաղաքական աշխատանքը պետք է ժամանակին մերկացնի կուլակութիւն հակահեղափոխական ազիտացիան, բացահայտելով նրանց գործողութիւնները դասակարգային ելութիւնը, արգելիսով մեկուսացնելով կուլակութիւնը միջակներից ու չքավորութիւնից:

Պետք է նկատի ունենալ, վոր խորհրդային իշխանութիւնն թշնամիներն իրենց հակահեղափոխական աշխատանքի մեջ առաջին հերթին կողտագործեն ամենատեսակ լուրերը: Փորձնական մոբիլիզացիաների ժամանակ, որինակ, հաճախ լուրեր ելին պարածվում սկսված ռադիական գործողութիւնների մասին (այն մասին, թե հակառակորդի գործերը գրավել են այս-ինչ վայրը, կամ թե այս-ինչ քաղաքը այնպիսիների գործած հարձակումով ավերված է և այլն), լուր այն մասին, թե մոբիլիզացիայի յեն յեն թարկելու բոլորին՝ ծեր ու ջահել, դանադան խուճապային լուրեր աղբանքների և պարենի մատակարարման հարցերի մասին (կոոպերատիւների փակման, աղի պակասութիւն մասին և այլն):

Այդ լուրերը քիչ մնաւ չեն հասցնի մոբիլիզացիայի հաջողութիւնը: Նրանք քաջայայտ են բնակչութիւնն ավելի քիչ դիտողից մասը, գցում են զորակոչվածների տրամադրութիւնը, գրգռում են նրանց յերկրի համար վնասակար գործողութիւնների (հարբեցողութիւն, անկարգութիւն, սրիկայութիւն): Դրանց տարածման առաջն առնելու համար պետք է ձեռք առնել քաղաքական ու ազմինիստրատիվ ազդման բոլոր միջոցները:

Փորձնական մոբիլիզացիայի ժամանակ հաջողվում եր բացատրական աշխատանքով կամ մեղմել խուճապային արամազրութիւնները և կամ բոլորովին չքացնել: Որինակ, կոոպերատիւի մոտ հերթերի կանգնած գյուղացիները բացատրութիւնից հետո ալլուրի և աղի փոխարեն սայլի համար ձյութ ելին առնում: Մի ուրիշ տեղ գյուղացիները հերթերի կանգնածներին հայհույում ելին խուճապ սերմանելու համար:

Այդպիսի գեպերը չեւտում են բնակչութիւնը դրական հասարակական կարծիքի հակայական դերը: Փորձնական մոբիլիզացիա-

ների ժամանակ մենք ունեցել ենք նաև այդ տեսակետով ցուցադրական մի ամբողջ շարք որինակներ: Շատ աշխատանքում չբավորենք առաջին ելին ձերը բերում հանձնաժողովին և, դալիս ելին իրենք և ուրիշներին ոգնում ելին կաղմակերպված և ժամկետին ներկայանալու: Նրանց կողմից հաճախ ելին լսվում աշխատի հայտարարութուններ: «Մենք ամենքս, մի մարդու պես, խորհրդային իշխանության պաշտպան կլանգնենք»:

Համկ (բ) Կ բջիջներն ու հասարակական կաղմակերպութունները ամեն ինչ պետք է անեն աշխատավորների ախտիվ-դրական վերաբերմունքը դեպի մորիլիզացիան կաղմակերպելու համար: Անհամեմատ ավելի հեշտ է պայքարել ղինադարձների յերկայանալը պարտակողներին և ձերը, խարը և դումաղը չհանձնելու դեմ, յեթե այդ բանին ոգնում են իրենք պուղացիները: Իժվար է ամենատեսակ լուրերի տարածման դեմ մաքառել, յեթե քաղաքացիները չեն մերկացնում դրանք: Այդ բանում ամենաճշգրտ միջոցը կլինի իրենց վրա դրված պարտականութունները ժամանակին և ճշտությամբ կատարող համադրուղացիների որինակը, մանավանդ կուսակցականների, կոմյերկտականների, կուլանան-ասկաների, հասարակական կաղմակերպութունների անդամների և քաղաքացիական պատերազմի մասնակիցների որինակը:

Առաձնապես կարևոր է ընդգծել մորիլիզացիայի ամբողջ աշխատանքի մեջ խորհրդային աղարատին բնակչության կողմից ոժանդակութուն ցույց տալու կարևորութունը: Փորձնական մորիլիզացիաների ժամանակ դեպքեր են յեղել, յերբ թշնամական տարրերը դիտավորյալ հակառակ են դործել տեղական իշխանություններին: Յեղել են, որինակ, կուլանների կողմից մերժումներ՝ հատուկ սուբհանդակների համար սայլակ տալու և այլն: Նման փաստերը պետք է խիստ հակահարված ստանան աշխատավորներին իրենց կողմից: Թող գյուղացիներն իրենք հրապարակ հանեն մորիլիզացիայի ընթացքն արդելակել փորձող բոլոր անձերին:

Մեծ նշանակութուն ունի աշխատանքը կանոնց մեջ: Կանոնք ավելի հաճախ են խուճապի մասնավում: Իր ամուսնուն ճանապարհ դնող կնոջ վիշտը ախամայից ամուսնուն էլ է անցնում: Ընդհակառակը, մորիլիզացիայի հաջողությանը քիչ ոժանդակութուն չի ցույց տա դիտակից կինը, վորը չի լքվում, վաստահ և, վոր գյուղի ոժանդակությամբ ինքը կարող է ամուսնուն փախարինել անասնության մեջ: Այդպիսի դիտակից կանոնք շատ կտա

յին քաղաքացիական պատերազմի ժամանակ: Նրանք անպայման կլինեն նաև առաջիկա պատերազմի ժամանակ: Նրանց անձնական որինակը պետք է ամեն կերպ ժողովրդականացնել, վորպես-ղի մնացածները դրանց հավասարվեն: Փորձնական մորիլիզացիայի ժամանակ մի դյուղում 6 բատրակուհի կանանց ընդհանուր ժողովի մեջ հայտարարեցին. «Մենք չենք կարող այլևս անկուսակցական մնալ: Հայտարարություն ենք տալիս մեղ կուսակցության մեջ ընդունելու մասին»: Ժողովը ցնծությամբ ընդունեց այդ հայտարարութունը: Նման դեպքերի մասին պետք է դուռը բոլոր քաղաքացիներին հայտնի դարձնել պատի թերթի, թերթի կարդալու, դուրյցների միջոցով և այլն:

Քաղաքական աշխատանքը բարդանում է ճակատամերձ չերտում և հակառակորդի ողային ուժերի դործողութունների չերտում: Ճակատի մոտիկութունը, ողից հանկարծական հարձակման հնարավորութունը, ընդհանուր չրչապատի լարվածությունը այստեղ ավելի նպաստավոր հող են ստեղծում խուճապի, փնտարարության և ամեն տեսակ պրովոկացիոն լուրերի տարածման համար, վորոնք այդ պայմաններում ավելի արագ են ընդունվում և կարող են վատթարադույն հետևանքներ ունենալ մորիլիզացիայի ժամանակ հանդիսան ու կարգը խախտելու իմաստով: Ճակատամերձ չերտն ամենից ավելի յե յենթակա լրանների ու հաստեղարդայնորեն թշնամի տարրերի դործողութուններին: Այդ ամենը իշխանության մարմիններից ու կաղմակերպութուններից հատուկ զգոնութուն, մորիլիզացիան վիժեցնելուն ուղղված դործողութունների արագորեն մերկացում և կասեցում է պահանջում:

ՄՈՐԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ Ո՛Վ Ե ՏԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԲՐ

Այդ հարցի պատասխանը պարզ է. քաղաշխատանքը տանում է նրան դեկտավարում և նա, ով այդ խաղաղ ժամանակ է իրականացնում, այսինքն՝ Համկ (բ) Կ տեղական կոմիտեներն ու տեղական կուսակցական կաղմակերպութունները: Մորիլիզացիայի քաղաքական աղահոգության ամբողջ պատասխանատվութունը նրանց վրա յե դրվում:

Բայց քաղաքական աշխատության հաջողությունը կախված է նաև ՌԳԿ-ների, գյուղխորհուրդների և հասարակական կաղմակերպութունների ամբողջ աշխատանքից: Յեթե զորակոչվածների

հավաքը և ձեռքի խմբումը կազմակերպված չկատարվեն, պատշաճ
կարգը չսահմանվի հավաքի ու խմբման կետում, — կնշանակի քա-
ղաքական ապահովությունը անհրաժեշտ արդյունքները չի տա:
Յեթե բանակին ձեռք ու դուռնակ հայթայթելու պարտավորությու-
նը ունեցող տերերին ընտրելիս դասակարգային սկզբունքը չպահ-
պանվի, — դեպի մոբիլիզացիան աշխատավորի անբարենպաստ
փերաբերմունքը կստեղծվի: Յեթե զորակոչվածների ընտանիքներին
ուղենելու միջոցներ ձեռք չառնվեն, նրանց տրամադրությունը կընկ-
նի: Յեթե զորակոչվածների ու բնակչության նյութական-կենցա-
ղային ստատուսը (սպասումի ու գիշերելու դեռահարմարներ,
խմելու ջուր, սնունդ և այլն) չկազմակերպվի, այդ նրանց մեջ ան-
բավականություն կհարուցի դեպի իշխանություն տեղական մար-
միկները, և, հետևապես, քաղաքականապես կբարդացնի մոբի-
լիզացիան: Վերջապես, հաջող մոբիլիզացիան անհնարին և առանց
հակախորհրդային տարրերին մեր աշխատանքը դժվարացնելու,
վիժեցնելու նրանց փորձերի միջոցին վճռական հակահարված
տալու: Կնշանակի մոբիլիզացիայի քաղաքական ապահովության
աշխատանքը տանում են վոչ միայն ՀամԿ (բ) Կ տեղական կոմի-
տեներն ու կուսակցական կազմակերպությունները, այլև խոր-
հրդային ամբողջ ապարատը բոլոր աշխատավորների ուժանդա-
կությամբ:

Ճիշտ չէր լինի, յեթե մտածեյինք, թե կուսակցական կազ-
մակերպությունը մենակ կարող էր այդ հսկայական աշխատան-
քից դուրս հանել: Իսկ փորձնական մոբիլիզացիաների ժամանակ
հաճախ դերթե այդպես ել լինում էր: Կուսակցականները չափից
դուրս ծանրաբեռնում էին իրենց, իրենց վրա ուժից վեր աշ-
խատանք էին բարդում, և հետևանքն այնուամենայնիվ այն էր
լինում, վոր չէր հաջողվում ամեն ինչ անել: Ուրիշ կերպ չէր ել
կարող լինել: Պետք է լայնորեն ոգտագործել կոմյերիտական
կազմակերպությունները, արհեստակցական միությունները,
կոոպերացիան, կոտնտետությունները, հասարակական կազ-
մակերպությունները (չքաղաքական խմբերը, Պաշտ-Ավիա-
թիմը, ՄՈՊՐ-ը, պատգամավորուհիներին, և այլն, և
քաղաքական հիմնարկները (նույն թվում և խրճիթ-ընթեր-
ցարանները): Հատկապես կարևոր է աշխատել, վոր բոլոր մար-
միկներն ու հասարակական կազմակերպությունները համերաշխ
աշխատեն մոբիլիզացիայի քաղաքական ապահովության գոր-
ծում:

Իսկ ի՞նչ պետք է անեն հասարակական կազմակերպություն-
ները: Ամենից առաջ նրանցից յուրաքանչյուրը կուսակցական
բջիջին և խորհրդային ապարատին ոգնում է նրանց ամբողջ աշ-
խատանքի մեջ, մոբիլիզացիայի հետ կապված բոլոր միջոցա-
ռումները անցկացնելու մեջ: Շատ վատ է, յեթե մոբիլիզացիայի
ժամանակ հասարակական կազմակերպությունները վիճեն իրար
հետ, թե ով ինչ անի, կամ նեղ սահմանափակվի յուրաքանչյուրն
իր ֆունկցիաներում: Թե՛ ինչ իմ, Պաշտ-Ավիաթիմի կամ այլի
գործն է կուսակցային աղիտացիան, կամ զորակոչվածների՝ հա-
վաքի կետը ժամանակին ներկայանալն ապահովելը: Այդ իմ պար-
տականությունները շրջանից դուրս է: Այդպիսի վիճերից վոչ մի
ոգուտ չի դուրս գա: Գործը բոլոր չորս վոտով կկաղա:

Հասարակական կազմակերպությունները պետք է մասնակի-
ցեն ամբողջ ֆադախական աշխատանքին: Պետք է արդյոք ապահո-
վել զորակոչվածների ժամանակին ներկայանալը, պետք է ար-
դյոք կարգ հաստատել հավաքի ու խմբման կետում, — ամեն բա-
նում հասարակական կազմակերպությունները պետք է ոգնեն
կուսակցությանը և խորհրդային իշխանությանը:

Հասարակական կազմակերպությունները հատկապես պետք է
ցույց տան իրենց դասակարգայնորեն-թշնամի տարրերի յեկույթ-
ների դեմ պայքարելիս: Իր ժամանակին հակահարված տալ կու-
լակություն և հակախորհրդային տարրերի ամեն փորձերին՝ կազ-
մալուծելու մոբիլիզացիայի ընթացքը, — ահա թե ուր պետք է
ուղղվեն հիմնական ուղադրությունը հասարակական կազմակեր-
պությունները, այդ պայքարում ավելի սերտ համախմբվելով
կուսակցական բջիջի և խորհրդային որգանների շուրջը:

Ընդհանուր խնդիրներից գառ, հասարակական կազմակեր-
պություններից յուրաքանչյուրը ունի հատուկ խնդիրներ, վո-
րոնք առաջին հերթին նրան են վերաբերում:

Այսպես, փոխոգնություն կոմիտեների հիմնական պարտա-
կանությունն է՝ ոգնություն կազմակերպել զորակոչվածների ըն-
տանիքներին ու չքավորական տնտեսություններին, վորոնք բա-
նակին տվել են իրենց վերջին ձին կամ սայլակը:

Կոոպերացիան ապահովում է բնակչությանը սննդամթերք-
ների նորմալ մատակարարումը, հավաքի ու խմբման կետում
բավարար քանակով առաջին անհրաժեշտության առարկաների
վաճառք է կազմակերպում, պայքարում է չտալապահության և դե-



Զբաղվորութեան խմբերն ու գյուղատնտեսական բանվորները արհմիութիւնները կուսակցական կազմակերպութեան հիմնական նեցուկն են կուսակցութեան ու հակախորհրդային յարերի հակահեղափոխական աշխատանքի դեմ մղած կռիւմ :

Մեր իրագրից չհանձնող յայնչ ու ժանդակելու դործում կուտնտեսությունների ու խորհրդատեսությունների հսկայական դրական հնարավորությունների մասին վերոյ պատկերացում տալիս է «Սերմնացան» («СЕМЕНА») կոմունայի (Հյուս. Կովկասի Ստալայի շրջան) չինական սպիտակ բանդիտները հարձակմանը տված պատասխանի հետեյալ որինսկը: Ահա ինչ է տեսլ այդ կոմունան իր վերոյման մեջ.

Մենք հնարավորություն չենք ունեցել 1917 թ. հոկտեմբերյան անցքերին ակտիվորեն մասնակցելու: Իսկ այժմ բոլորս թի մարդու պես զարտարստ ենք ակտիվ մասնակցություն ունենալու. հոկտեմբերի նշանումների պաշտպանության մեջ:

18

Ամբողջությամբ պաշտպանունակությունը, բարելավելով մեր կամավոր բնակիչներու յանձնարարական գործունեությունը, ուսկիցս ընդհանուր առմամբ աշխատավորների ուշադրությունը գեղյկ աշխատանքը, վեր կապիտալիստական վարձկաններն են պատրաստում, մենք կկարողանանք նրանց հակահարված տալ և խորհրդային Միության դեմ ուղղած պատերազմը զարմնել համաշխարհային Հիլտեմբեր»:

Պաշտօնակատարողները, իբրև մի կազմակերպություն, վերին հիմնական նշանակումը յերկրի պաշտպանությունը ոտանդակեն և, մորթիլիցացիայի ժամանակ գործունեություն լայն ասպարեզ և տրվում: Ողնելով խորհրդային ասպարատին նրա կազմակերպական և աղմինիստրատիվ ամբողջ աշխատանքում, ակտիվորեն մասնակցելով քաղաքական աշխատանքին, Պաշտօնակատարողները պետք է հատուկ ուշադրություն դարձնի ռազմական սրբապաշտպան զորակոչվածներին ու բնակչության մեջ և, գլխավորապես, հակառակորդի ուղային հարձակումից բնակչության պաշտպանություն կազմակերպմանը (վերջինն առանձնապես կարևոր է հակառակորդի շարժումները և հակառակորդի ավիացիայի հնարավոր զործողությունները շարժում):

Ընդհանրապես հասարակական կազմակերպություններից յուրաքանչյուրը պետք է վերևի բանով ոգնի մոբիլիզացիան անցկացնելուն: Վերցնենք թեկուզ մի: Բազիս սիրողները կարող են կազմակերպել բարձրախոսների աշխատանքը, լույս ընծայել ռադիո-տեղեկագրեր: Պատգամավորուհիներն աշխատանք են տանում կանանց չրջափռմ: Նույնիսկ «Մանուկների բարեկամը» պե

19

կաղմակերպութիւնն եւ կարող ե իրեն ցույց տալ աշխատելով մանուկներին մեջ, մանավանդ կաղմակերպելով զօրակոչվածներին ընտանիքներին մանուկներին ոգնելու գործը:

Մի մանկական դպրութիւն որինակը (փորձնական մօբիլիզացիայի ժամանակ) ցույց տվեց, Վոր մանուկները կարող են լայնորեն ոգտադործվել իրեն նորույթներ տարածողներ, ժողովներին ու հավաքույթներին աղբարարներ, պատի թերթ, լոգուններ, հայտարարութիւններ գրելու համար, ժամանցներ սարքելու համար (մանկական ներկայացում): Մանուկները պակաս աղբեցութիւն չեն գործի նաև իրենց զօրակոչված հայրերի, մայրերի և առհասարակ շրջապատող բնակչութեան տրամադրութեան վրա: Այս բոլորը այն ե ասում, Վոր դպրոցներն եւ պետք ե լայնորեն ոգտադործել մօբիլիզացիայի ժամանակ, աշակերտութեան մեջ բացատրական աշխատանք տանելով և նրանց մասնակից անելով մօբիլիզացիային ակտիվորեն աշակցելուն:

Բոլոր ասածից պարզ ե, թե հասարակայնութիւնն ինչ հրապարակաւ նշանակութիւն ունի բնակչութեան և զօրակոչվածներին լայն մասնակցութեամբ քաղաքական աղբեցութեամբ ընդգրկելու համար: Բոլոր «չարժաբեր փոկերը» շնորհքով ոգտադործելու պայմանով միայն կուսակցական կաղմակերպութիւնը և խորհրդային ապարատը կարող են հաջողութեամբ ավարտել մօբիլիզացիան:

ԽՐԾԻԹ-ԸՆԹԵՐԳԱՐԱՆԻ ՏԵՂԸ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄՈՒԲԻԼԻԶԱՑԻԱՆԵՐՈՒՄ

Խրճիթ-ընթերցարանների աշխատանքը փորձնական մօբիլիզացիաների ժամանակ այնքան եւ լավ դրութեան չեն: Խրճիթ-ընթերցարանը մեծ մասամբ չեն իմանում, թե ինքն ինչ պիտի անի: Միջանի խրճիթ-ընթերցարաններ փորձնական մօբիլիզացիայի ժամանակ մատ մատի չլսիցին: Այդ գլխավորապես վերաբերում ե այն խրճիթ-ընթերցարաններին, Վորոնք հեռու յեն գտնվում այն գյուղխորհրդից, Վորտեղ սովորաբար հավաքվում եր բնակչութիւնը: Հաճախ վիշվոք չեն մտնում խրճիթ-ընթերցարան, Վորովհետեւ զօրակոչվածը նրա կարիքը չեն դգում, իսկ խրճիթ-ընթերցարանն ինքը հաճախ «մոռանում եր» գնալ դեպի մասսաները: Միջանի խրճիթ-ընթերցարաններ այնուամենայնիվ մի բան արին. լույս ընծայեցին պատի թերթ, կաղմակերպելին գրքերի ցուցահանդես, տեղեկատու սեղաններ, սարքեցին զօրակոչվածների վոլլերթի յերեկոներ: Սակայն ջանքերի մեծագույն մասը

վիշինչ դարձավ, Վորովհետեւ, գլխավորապես, խրճիթ-ընթերցարանը չկարողացավ պատասխանել բնակչութեան ու զօրակոչվածների պահանջներին:

Ինչո՞ւ յեր խրճիթ-ընթերցարանը վատ աշխատում: Ամենից առաջ՝ Վորովհետեւ ինքնուրույնութեան եր ձգտում, կորվում եր Համկ (բ) ԲՆԻՎի աշխատանքից, կոմյերիտմիութիւնից, գյուղխորհրդից ու հասարակական կաղմակերպութիւններից: Նա չեն կատարում իր հիմնական ֆունկցիան— այդ բոլոր կաղմակերպութիւններին չեն ոգնում մօբիլիզացիայի քաղաքական ապահովման աշխատանքում: Ուստի առաջին բանը, Վորն այդ պատճառով պետք ե անել, այն ե, Վոր խրճիթ-ընթերցարանը մասսաների քաղաքական ընդգրկման ամբողջ սիստեմում ամուր տեղ դրվի:

Խրճիթ-ընթերցարանը պետք ե հեմակետ ծառայի Համկ (բ) Կ տեղական բջիջի, խորհրդային մարմինների, կոմյերիտմիութեան և հասարակական կաղմակերպութիւնների համար, յերբ մոբիլիզացիայի ժամանակ դրանք քաղաքական աշխատանք եմ տանում: Ահա այն դրութեւ, Վորը կարմիր թելի պես պիտի անցնի խրճիթ-ընթերցարանի բոլոր միջոցառումների միջով: Վոչ թե իրենից քաներ հնարել, Վոչ թե սեփական գյուտերով գրադվել, այլ կատարել այն, ինչ բՆԻՎն ե պահանջում, — ահա խրճիթ-ընթերցարանի աշխատանքի հիմնական ուղին ու մեթոդը մօբիլիզացիայի ժամանակ:

Խրճիթ-ընթերցարանն իր տրամադրութեան տակ յեղած բոլոր միջոցներով ոգնում ե վերը թված բոլոր կաղմակերպութիւններին կատարելու կուսակցութեան ու խորհրդային իշխանութեան կողմից նրանց վրա դրած խնդիրները մօբիլիզացիայի նկատմամբ:

Խրճիթ-ընթերցարանն այդպիսի միջոցներ չառ ունի: Գյուղի հասարակական կարծիքը կաղմակերպող պատի թերթը չի կարող յուր գնալ առանց խրճիթ-ընթերցարանի ոգնութեան: Մօբիլիզացիայի ժամանակ այնպիսի պատասխանատու և կարևոր գործ, ինչպիսին տեղեկատու աշխատանքն ե, չառ տեղեկում նույնպես խրճիթ-ընթերցարանն ե կաղմակերպում: Նրա վրա յե դրվում նույնպես լրագրերի ու աղիտացիոն նյութերի տարածումը, ինչպիսի և դրանց առավելագույն լրիվ և ոգտավետ ոգտադործման կաղմակերպումը:

Վերցնենք, որինակի համար, թեկուզ այնպիսի մի գործ, ինչպես հավաքույթն ե, ժողովը, միտինգը: Այստեղ եւ առանց խրճիթ-ընթերցարանի չի լինի: Նա այդ նպատակով գարդարում

ու սարքավորում ե չենքերը, պատրաստում ե կարմիր դրոշակները, պլակատները, լոգոնշները և այլն: Վերջապես, մի այնպիսի բնագավառ, ինչպես զորակոչվածներին ու բնակչությանը գեղարվեստական աշխատանքով ու ժամանցով (ներկայացում, յերգ, նվագ, պարեր, պատկերացույց, շոտասերուկներ, անպարարություն և այլն) սպասարկելն ե, ամբողջովին խրճիթ-ընթերցարանի ու նրա ակտիվի վրա յե ընկնում:

Ինչպես այս ցանկից տեսնում եք, խրճիթ-ընթերցարանը գրեթե վոչ մի միջոցառում չենք ունենում: Նա ամբողջ ժամանակ վորեւ մեկին ոգնում ե, վորեւ մեկին ապահովում ե կամ չենքով, կամ ել իր տրամադրություն տակ յեղած միջոցներով (ձեռնարկներ, դրականություն, ներկեր, թուղթ և այլն):

Վորտեզ խրճիթ-ընթերցարան չկա, նրա աշխատանքը կատարում ե կարմիր անկյունը դպրոցի հետ մեկտեղ: Կարելի չկա այդ դեպքում ամբողջովին հույսը դնել կարմիր անկյան վրա, փորովհետեւ նրան կից չկա մշտական աշխատող, վորի վրա կարելի լիներ մի ամբողջ շարք այնպիսի պարտականություններ դնել, վոր, ասենք, դրվում են խրճիթվարի վրա: Կարմիր անկյան ակտիվը սովորաբար նույնպես թույլ ե: Ահա թե ինչու աշխատանքի մեծադույն մասը սեպտեմբերի դպրոցի վրա՝ ուսուցչի գլխավորությամբ: Գործը շատ բանում կարող ե փոխարինել խրճիթ-ընթերցարանին: Վերցնենք թեկուզ լրագրերի ու ագիտացիոն նյութերի տարածումը, չենքերի դարգարումը, լոգոնշներ ու պատի թերթեր գրելը, յերեկույթ-վոդլերթներ կազմակերպելը՝ ներկայացումով ու եստրադային յեկույթներով:

Կարմիր անկյունների աշխատանքն զգալապես թեթեանում ե այն գյուղերում, վորտեզ կոմյերիտիություն ընկնեն կան: Այդ դեպքում խրճիթ-ընթերցարանի պարտականությունների մեծ մասը կարող ե վերցնել կոմյերիտիություն ընկնող, դարձյալ կարմիր անկյան ակտիվի, դպրոցի ու կանանց ակտիվի հետ մեկտեղ:

Խրճիթ-ընթերցարանի հետ համեմատած՝ ագիտացիոն աշխատանք ավելի լայն կարող են ծավալել գյուղացու տները: Մորիլիզացիայի հայտարարումից հետո անմիջապես գյուղացու տունն իր բոլոր կազմակերպությունների (խմբակների, կուրսերի, խմբերի, կուլեկտիվների) աշխատանքը վերակազմում ե մորիլիզացիայի կարիքներին սպասարկելու: Գյուղացու տունն իբ

գյուղում կազմակերպում ե մորիլիզացիայի ու պատերազմի հարցերին նվիրված ցուցահանդես: Դժվար չե այդ անկյուն, յեթե ուշադրություն առնենք, վոր ուղղական վտանգի ե ՆՍՀՄ պաշտպանության հարցերը սխտեմատիկորեն լուսարանվում են գյուղացու տան անկյուններում: Այդ ցուցահանդեսի շուրջը լինում են դրույցներ, արվում են զեկուցումներ և այլն: Ահա համեմատ ավելի լայն կարող ե դրվել գյուղացու տների աշխատանքը զորակոչվածներին ու բնակչությանը գեղարվեստական սպասարկում ցույց տալու գործում, այն ե՝ յերեկույթներ, եստրադային յեկույթներ կազմակերպելում:

Գյուղացու տունը ռայոնում չընկնում ե իր շրջիկ կինոն կամ շրջիկ կինո-ռադիոն: Չի խանդարի, յեթե կինոյին ամբողջի մի ագիտատոր, վորը կարողանար կինո-նկարներ ցույց տալուց առաջ մխտնող սարքել: Դրանից զատ գյուղացու տունը ռայոնի սոցալարիման համար կարող ե սարքավորել հատուկ ագիտ-սայլակ շարժական տիկնախաղով, ցուցահանդեսով, մանրակալիբր հրացանի նշանառություն տիրով, ագիտացիոն նյութերով, փոքրիկ դրագարանով: Յեթե գյուղացու տանը կից կա դրամ-խմբակ, նվագախումբ, յերգեցիկ խումբ, եստրադային կուլեկտիվ, ցանկալի յե, վոր դրանք ել ռայոն ուղարկվեն բնակչությանն ու գորակոչվածներին սպասարկելու:

Այսպիսով խրճիթ-ընթերցարանը, կարմիր անկյունը, դպրոցը ե գյուղացու տունը կուսակցական ընկնող կարևորագույն լծակներ են մորիլիզացիայի քաղաքական ապահովման աշխատանքներում:

ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐԿԱՐԱՆԸ ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՉ ԱՇԽԱՏԱՆԻ Ե ՏԱՆՈՒՄ

Մորիլիզացիան իր խիստ կարգն ու պլանն ունի: Այսպես չի ել կարելի: Միքանի որվա մեջ պահանջվում ե վորտեզի հանել հարյուր-հազարավոր զինապարտներ, բանակն ապահովել մարդկային համալրումով, ձիերով, գումակով և նյութական այլ ուսուրանքով: Այստեղ առանց առաջուց մշակած պլանի վոչինչ չի տրվի: Պետք ե առաջուց իմանալ, թե ով ինչ պետք ե անի մորիլիզացիայի առաջին, յերկրորդ, յերրորդ որը և այլն: Միայն այն ժամանակ հնարավոր կլինի կարգ հաստատել և ամեն ինչ կատարել հրամանով նախատեսած ժամկետներին:

Խրճիթ-ընթերցարանն իր աշխատանքը կառուցում է խոստ-
րեն համաձայնեցրած բոլոր կաղմակերպությունների համար ընդ-
հանուր այդ պլանին: Յեթե պլանում մոբիլիդացիայի առաջին որ-
վա ժամը 7-ին հավաքույթ է նախատեսված, խրճիթ-ընթերցա-
րանը պետք է այդ հավաքույթն ապահովի այն ամենով ինչ տվյալ
դեպքում նրանից պահանջվում է: Յեթե, որինակ, խրճիթ-
ընթերցարանը հավաքույթից հետո անմիջապես չկաղմակերպի
տեղեկատու աշխատանքը, ստենք, ուշանա կես ժամով, ապա գյու-
ղացիներն իրենց հարցուփորձով կպաշարեն գյուղխորհրդի նա-
խագահին կամ բջիջի քարտուղարին, նրանց հնարավորություն
չեն տա իրենց պարտականությունները կատարելու: Նման ուշա-
ցումից կարող է բարդանալ մոբիլիդացիայի անցկացումը: Այս-
պիսով, խրճիթ-ընթերցարանի ամբողջ աշխատանքի ելությունն
այն է, վոր ապահովի իշխանության և կուսակցության տեղական
որգաններին միջոցառումները այն հաջորդականությամբ և այն
ժամկետներով, ինչպես այդ ընդհանուր պլանով ծրագրված է:

Մոբիլիդացիայի ազդարարումը

Մոբիլիդացիայի ազդարարումը չափազանց պատասխանատու
միջոցառում է: Սովորաբար ամենից ավելի խուճապ լինում է աղ-
բարարման մոմենտին, յերբ ուղարկվածները չընում են խրճիթ-
ները և քաղաքացիներին հավաքույթի հրավիրում: Գյուղացի-
ները ղեռ չգլխեն մանրամասնությունները: Գյուղացիները սուգն
սկսում են: Կուլակներն աշխատում են ամեն մի բողբոս ոգտա-
գործել, վորպեսզի լուրեր տարածեն, խուճապ ստեղծեն, խոր-
հրդային իշխանությանը խանդարեն մոբիլիդացիան կատարելու:
Առաջին հարցը, վոր յուրաքանչյուրի առջև կցցվի, այն է, թե
ինչու յե մոբիլիդացիա, ում գեմ է պատերազմը, նրանք բանակ
գորակողվում են թե վոչ, իր ձին տանի հանձնման կետը թե վոչ,
և այլն: Այլ կերպ ասած, յուրաքանչյուր քաղաքացի ուզում է ա-
մեն ինչ իմանալ այն մասին, ինչ իրենից պահանջում է մոբիլիդա-
ցիան:

Ամեն մեկին պետք է բացատրել՝ ինչու և ում գեմ մենք հար-
կադրված ենք պատերազմելու, ինչ է պահանջվում քաղաքացի-
ներից և այդ ամենը ինչ ժամկետների պետք է կատարել: Տեղնու-
տեյր պետք է մերկացնել ամեն տեսակի լուրերն ու պակասակերպ
կուլակային ազիտացիան, բնակչությանը ցույց տալով նրա հա-

կաճեղափոխական ելությունը, հասնել այն բանին, վոր գյուղը
գեպի մոբիլիդացիան ակտիվ-դրական վերաբերմունք ցույց տա,
դրանով իսկ զինաթափելով կուլակներին նրանց հետագա աշխա-
տանքում: Այդ նպատակներով ոգտագործվում են բոլոր միջոց-
ները, հատկապես խմբական ազիտացիան, տեղեկատու աշխա-
տանքը, լրագրերը և ազիտացիոն նյութերը:

Կուսակցական կոմիտեյի կողմ, հրամաններն ու հայտարա-
րությունները մոբիլիդացիայի, ձիերն ու գումակը հանձնելու մա-
սին՝ պատկանում են այն հիմնական նյութերին, վորոնց առաջին
հերթին պիտի ծանոթացնել բնակչությանը:

Խրճիթ-ընթերցարանը հատկապես պետք է հոգա այն մա-
սին, վորպեսզի հավաքույթում բարձրացնի աշխատավոր բնակ-
չության տրամադրությունը, հեղափոխական վոգեւորություն
ստեղծի: Փորձնական մոբիլիդացիաների ժամանակ հավաքույթ-
ները մեծ մասամբ վոգեւորությամբ ելին վերջանում և վերջա-
նում ելին հանդիսավորապես Ինտերնացիոնալ յերգելով: Յեթե
մինչև հավաքույթը և նրա սկզբին բնակչության մի մասի մեջ ըն-
կած տրամադրություն էր նկատվում, բացատրություններից հե-
տո տրամադրությունն արագ փոխվում էր: Գյուղացիները աշ-
խուժորեն ըննարկում ելին չոչափված հարցերը: Շատ գյուղերում
հավաքույթները հետո ցույցեր ելին կաղմակերպվում: Գյուղա-
ցիները դրոշակներով և հեղափոխական յերգեր յերգելով անց-
նում ելին գյուղով, ցուցարբերելով իրենց պատրաստակամու-
թյունը՝ զենքը ձեռքին յերնելու սոցիալիստական հայրենիքը
պաշտպանելու համար:

Հավաքույթի ընդունած բանաձևը, վորով հանդիսանում է
տրվում խորհրդային իշխանության և կուսակցության միջոցա-
ռումներին և հայտնվում է բնակչության պատրաստակամու-
թյունը բոլոր պարտականությունները լիովին, ճշտությամբ և
ժամկետին կատարելու, կախվում է խրճիթ-ընթերցարանում աշ-
քի ընկնող մի տեղ կամ գետեղվում է պատի թերթում: Սակայն
քվեարկել բանաձևը և պատին կախել այն՝ չի նշանակում կենսա-
գործել այն: Իսկ այդ վերջինն առաջինից ել կարեոր է: Խրճիթ-
ընթերցարանը պետք է բոլոր ժամանակ բնակչությանը հիշեցնի
ընդունած բանաձևը, պատի թերթում լուրեր տալով այն մասին,
թե ընդունված վորոշումներն ինչպես են կատարվում:

Հավաքույթներից անմիջապես հետո տեղեկատու աշխատանք
և կաղմակերպվում՝ մոբիլիդացիայի կարգի, ժամկետների մա-

սին, թե ով է ներկայանալու, զորակոչվածների ընտանիքների արտոնութիւնների մասին, ձիերի գների մասին, իր հետ բերած հագուստեղենի մասին և այլն: Տեղնուտեղը հենց տեղեկատու սեղան է բացվում, վորտեղ տեղական աշխատողները պատասխաններ են տալիս գյուղացիների հարցերին: Առաջին ժամի ընթացքում այնքան շատ հարց կլինի, վոր, ըստ հնարավորութեան, այդ ժամին գյուղխորհրդի բոլոր աշխատողները պետք է վոր մնան: Հատկապես կարևոր է ուշադրութեամբ ու համբերութեամբ լսել յուրաքանչյուր գյուղացու և հանդիստ տալ նրա պատասխանը: Զորակոչի յենթականները պետք է չըջապատված լինեն ընդհանուրի ուշադրութեամբ ու հոգատարութեամբ:

Հավաքույթից հետո զորակոչվածներին ու բնակչութեան միջև անընդհատ քաղաքական աշխատանք է տարվում անհատական ու խմբական ազդեցության, ժողովների, այս կամ այն միջոցառումը կիրառելիս աղմկնիստարտելով աշխատողների բացատրական աշխատանքի ձևով, ազդեցության տպագիր միջոցների, ժամանցների, գեղարվեստական աշխատանքի միջոցներով և այլն: Խորհրդի ընթերցարանն ուղղակի առնչութիւն ունի այդ ամբողջ աշխատանքին, տեխնիկական արհեստներով այս կամ այն միջոցառումները (ժողովները), ազդեցություններին նյութեր հալթայթելով, տեղեկատու սեղանները տեղեկատու նյութերով արհեստներով, անմիջականորեն կազմակերպելով գեղարվեստական աշխատանքը և այլն:

Միևնույն ժամանակ հատկապես կարևոր է ուշադրութիւն դարձնել կուսակցական ու կոմյունիստական կազմին ողնութիւն ցույց տալու վրա՝ նրանց անհատական ու խմբական ազդեցության տանելիս: Մասնավորապես, խորհրդի ընթերցարանը պետք է ողնի քաղաքից յեկած ազդեցություններին ռազմի քաղաքական ու տրեստեական գրութիւնը ուսումնասիրելիս, նույնպէս և նրանց ազդեցություն անհրաժեշտ նյութերով ոժտի:

Աղղարարութիւց հետո քաղաքական աշխատանքի մեջ կարևորագույն մոմենտ պետք է համարել կուսակցական, կոմյունիստական գյուղական ախարի, կանանց, Պաշտ-Ավիաբիմի բջիջի, աշակերտութեան ժողովները: Խորհրդի ընթերցարանը պետք է ողնի ժողովներ կազմակերպելուն և անցկացնելուն: Ինչ կարող է նա անել: Առաջինը՝ ժողովի համար չենք պատրաստել և սարքավորել: Պետք է նկատի ունենալ, վոր ժողովների մեծ մասը կկայանան հենց խորհրդի ընթերցարանի շենքում: Յեթե դրա համար ու-

րել չենք և հատկացվում (որինակ՝ դպրոցը), ապա խորհրդի ընթերցարանը պարտականութիւն է հանձն առնում այդ չենքը զարգարելու դիմանկարներով, լողունգներով, դրոշակներով և այլն: Յերկրորդ՝ առաջիկա ժողովի շուրջը հասարակական կարծիք ստեղծել, ժողովրդականացնել նրա վորոշումները, նշել, թե ինչպէս են կենսագործվում այդ վորոշումները:

Զորակոչվածներին ուղարկելը

Զորակոչվածներին գյուղից հավաքի ռազմական վայրն ուղարկելը կատարվում է կազմակերպված՝ պարտիաներով: Ներկայանալու պարտավորութիւն ունեցողները նշանակված ժամանակին հավաքվում են դրա համար նշված տեղը (գյուղխորհրդի մոտ, խորհրդի ընթերցարանի մոտ և կամ դրա համար նշանակված մի այլ տեղ): Ճանապարհ են դրում վորքան կարելի յէ հանդիսավոր, վորպէսզի բարձրացվի զորակոչվածների և բնակչութեան տրամադրութիւնը:

Մի գյուղում վորձնական մօբիլիզացիայի ժամանակ այսպէսի մի պատկեր ստացվեց: Զորակոչվածներն սկսել են հավաքավայրը դալ նշանակված ժամկետից ավելի վաղ: Հնարադետ քաղաւաքականները խմբացան ինչ անեն: Նվազող ճարեցին: Կազմակերպեցին պարեր, յերդ, շարժական խաղեր: Տրամադրութիւնն իսկույն բարձրացավ: Ամեն բանի մեջ զորակոչվածներն ակտիվ մասնակցում էին: Հավաքվածները խանդավառութեամբ դիմավորեցին հավաքավայրը յեկած պիտներ-ջուկատին:

Միտինգի ժամանակ յերկար ճառելու կարիք չկա: Դրանք կարող են զորակոչվածների տրամադրութիւնը փչացնել: Հեղափոխական վարկերութիւն ստեղծելու փոխարեն դրանք ընդունակ են հողնեցնելու զորակոչվածներին, նրանց անբավականութիւնը հարուցելու: Խորհրդային իշխանութեան ու կուսակցութեան ներկայացուցչի, ինչպէս և քաղաքացիական պատերազմի ամենից հարգված վետերանի, կին-պատգամավորուհու, պիտների կամ դպրոցականի միջանի տաք, խրախուսիչ խոսքը, գնացողներից մեկի պատասխանի խոսքը կտան ավելի շատ բան, քան յերկար ճառերը կամ գեկուցումները: Միտինգի վերջում կարգացվում է գյուղի քաղաքացիներից զորակոչվածներին տրվող նակարդ: Նակարդի մեջ խոսվում է պատերազմի ժամանակ զորակոչվածների ունեցած պարտականութիւնների մասին յերկրի հան-

դեպ, ցույց են տրվում մորիլիզացիայի նորմալ ընթացքն արդե-
լակող բոլորի դեմ պայքարելու միջոցները, նույնպես և վստա-
հացում և լինում, վոր բնակչութիւնը կհողա զորակոչվածներին
ընտանիքների մասին:

Միքանի գյուղում փորձնական մորիլիզացիայի ժամանակ
միտինգից հետո զորակոչվածներին հանդիսավորապես հանձնե-
վում են կարմիր դրոշ՝ վողջերթի լողունգով, վորը հետներն ա-
ռած՝ նրանք գնում են ին հավաքավայրը և քաղաք: Այդ ներկա-
ների վրա խոշոր տպավորութիւն են գործում:

Զորակոչվածներին ուղարկումը կադմակերպելիս խրճիթ-ըն-
թերցարանի վրա քիչ պարտականութիւններ չեն դրվում. պատ-
րաստել և զարդարել ուղարկելու տեղը, կադմակերպել յերգեցու-
ղութիւն, նվազ, պարեր, պատրաստել կարմիր դրոշ՝ լողուն-
գով, նակալի շուրջը աշխատանք ծավալել և այլն: Թվածից դատ,
խրճիթվարը գնացող ակտիվիստներին պետք է հրահանգներ ատ-
ճանապարհին կատարելիք աշխատանքների մասին, ցուցում տա,
թե ճանապարհին ինչ աշխատանք պիտի տանեն և ըստ հնարավո-
րութեան ոժտի նրանց համապատասխան նյութով (աղետգրական-
նութիւնով, լրագրերով, դրքերով և այլն):

Պետք է նշել, վոր փորձնական մորիլիզացիաների ժամանակ
ամենաթույլ տեղը տարած աշխատանքն են զորակոչվածների
պարտիաների գնալու ճանապարհին: Ակտիվիստները մեծ մա-
սամբ չեն իմանում և չեն ինչ ել գտնում, թե ճանապարհին ինչ
կտրելի յե անել: Ինչպես կանոն, նրանց վոչվոր չեն հրահանգել:
Նրանցից շատերը պարզապես տարակուսում են ին՝ մի՞թե ճանա-
պարհին կարելի յե վորեւ աշխատանք տանել: Նրանք վոչ մի
կերպ չեն կարողանում քաղաքական աշխատանքի ձևեր համա-
բել ընկերական պարզ դրույցը, ասուլիսը, կատակները, յերգն ու
պատմվածքը: Այնինչ հենց այդ ձևերն են, վոր կարելի յե գոր-
ծադրել ճանապարհին:

Զորակոչվածները սովորաբար խմբերով կամ շարքով են
գնում: Ծանապարհին ակամայից խոսակցութիւն և սկսվում:
Հենց այդ խոսակցութեանն էլ պետք է տիրել, զորակոչվածին
ողնել բան հասկանալու մորիլիզացիայի ու պատերազմի հարցե-
րից, յեթե նա դրանք չի հասկանում:

Իսկ յերգն ու նվազարանները միթե «անգործութիւն»
են, ինչպես հակված են կարծելու վոմանք: Յերգը, նվազարաննե-
րը աշխուժացնում են, բարձրացնում են տրամադրութիւնը, վա-

զեւորութիւնն ևն ստեղծում զորակոչվածներին մեջ նրանց միտնու-
լում են մի ամուր կողակտի մեջ: Այնինչ փորձնական մորիլիզա-
ցիաների ժամանակ այնպիսի տարրիկաններն են ինչ գտնվում, վո-
րոնք զորակոչվածներին արդեւում են իրենց հետ նվազարաններ
վերցնել:

Յեթե խրճիթվարն ինքը մորիլիզացիայով կանչվում է, ապա
նա, յերեւի, քաղուղեկցող կնշանակվի զորակոչվածներին մի վորեւ
պարտիայի: Այդ դեպքում նա ինքն աշխատանք և տանում
ճանապարհին, ողտագործելով և հրահանգներ տալով իր պար-
տիայի մեջ գտնվող ակտիվին: Հավաքավայրը գալով՝ խրճիթվա-
րը մտնում է քաղապարտի պետի տրամադրութեան տակ, վորը
նրան ողտագործում է քաղաշխատանք տանելու:

Զորակոչվածներին ուղարկելուց հետո

Զորակոչվածները գնացին: Իսկ գյուղում ահագին աշխա-
տանք մնաց: Պետք է սիրտ տալ զորակոչվածներին ընտանիքնե-
րին, պատմել, թե նրանց հայրերին ու ամուսիններին ինչպե-
րնդունեցին քաղաքում, հավաքավայրում, ինչպես են նրանք
տրամադրված և այլն: Այդ մասին պատմում են վերադարձած
ուղեկցողներն ու ձիաատերերը: Կալ և, յեթե նրանք հետները դո-
քակոչվածներից նամակներ բերեն: Խրճիթ-ընթերցարանը նրանց
նամակներով պետք է ինֆորմացիա կադմակերպի զորակոչված-
ների կյանքի մասին, ընտանիքներին ողնել բանակ գնացողներին
հետ կապ պահպանելու, նամակներ գրել, հասցեներին մասին տեղե-
կանքներ ստանա և այլն:

Ուղարկելուց հետո անհապաղ պետք է սկսել զորակոչված-
ների ընտանիքներին ողնութիւն ցույց տալ: Վատ կլինի, յեթե
զորակոչվածը նամակներից տեղեկանա, վոր հասարակութեան
իրեն տված խոստումները չեն կատարվում: Խրճիթ-ընթերցա-
րանն իր ամբողջ աշխատանքում պետք է արտացոլի, թե ինչպե-
ս են գնում զորակոչվածների ընտանիքներին ողնելու գործը, խա-
րաղանի բոլոր սարսափ անողներին և այդ ողնութեան ծավալ-
մանը ընդդիմացողներին:

Հասարակութիւնը կհետաքրքրվի, թե ինչ դրութիւն և ճա-
կատում: Խրճիթ-ընթերցարանն ամեն ոք մանրամասն ինֆոր-
մացիա յե կադում ռադիոյով կամ թերթերից ստացված տեղե-

կուլթիւնները հիման վրա: Գրավոր ռազիո-ամփոփումներ ամեն ժամանակ և ամեն տեղ ել չի հաջողի լույս ընծայել: Ուստի ա-վելի լավ է բնակչութեանը սովորեցնել, վորոշ ժամերին խրճիթ-ընթերցարան դալ հերթական նորութիւններ իմանալու:

Դրա հետ մեկտեղ խրճիթ-ընթերցարանը պետք է հարյու-րապատիկ ութեղացնի բնակչութեան մեջ ռազմական սրբապաշտ-դը, աշխատավորների ռազմական սրբակտիկ պատրաստութիւ-նը, այդ կողմից ամեն կերպ ոգնելով ՊԱՋԸ-Ավիաքիմի բՆԻՎին:

Կուլակները գորակոչվածների դնալուց հետո ել չեն դադա-րեցնի իրենց վնասարար աշխատանքը: Նրանք կաշխատեն խան-դարել ընտանիքներին ոգնելու դործը, կչարունակեն զանազան լուրեր տարածել՝ բնակչութեան մեջ խուճապ սերմանելու նպա-տակով: Իսկայ առաջին հերթին, պետք է յենթադրել, կուլակները բոլոր միջոցները ձեռք կառնեն, վորպեսզի կազմալուծեն տնտե-սական կյանքը: Խրճիթ-ընթերցարանը պետք է սխտեմատիկո-րեն մերկացնի դասակարգային թշնամու գործողութիւնները, այդ բանում ամեն կերպ ոգնելով կուսակցական և հասարակա-կան կազմակերպութիւններին:

Քիչ չեն լինի խրճիթ-ընթերցարանի հոգսերն այն դեպքում, յեթե գլուղով անցնեն ուրիշ գլուղերից ու ռայոններից գորակոչ-վածները: Այստեղ պետք է հոգալ, վոր գլուղի բնակչութիւնը սրտազին ընդունի գորակոչվածների անցնող պարտիաները: Փորձ-նական մօրիւլիդացիաների ժամանակ մենք նման չատ վոր-ձեր ենք ունեցել: Բնակչութիւնն ընդառաջ եր գուրս դալիս տեղական իշխանութեան, կուսակցութեան ու հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչների գլխավորութեամբ: Մի գլուղում գլուղացիք ամեն մի տնից հավաքեցին 10-ական կուպկ, գնեցին թեյ, չաքար, բլիթներ և կանդառումների ժա-մանակ հյուրասիրում եյին գորակոչվածներին: Յեթե գորակոչ-վածների պարտիաները կանգ եյին առնում գիշերելու, խրճիթ-ընթերցարանը դեղարվեստական աշխատանք եր տանում, ժա-մանցներ եր սարքում, տարածում եր լրագրեր ու ազիտացիոն նյութեր:

Խրճիթ-ընթերցարանի համար հեշտ չէ այդպիսի աշխատանք տանելը: Չե վոր նրա ակտիվի, նույնպես և հասարակական կազմակերպութիւնների ակտիվի մեծագոյն մասը մօրիւլիդա-ցիայով կերթա: Պետք է մնացածներից նոր ակտիվ ստեղծել:

Պետք է հասարակական կազմակերպութիւնների մեջ նոր ան-դամներ ներդրավել: Միայն այդ պայմաններում խրճիթ-ընթեր-ցարանը կկատարի իր վրա դրված խնդիրները, միայն այդ ժա-մանակ նա կկարողանա ոգնել կուսակցութեանը, խորհրդային իշխանութեանը և հասարակայնութեանը ամրապնդելու յերկրի սրբապաշտականութիւնը, և ըստ ութերի ազդեցութիւն անելու մօրիւլիդացիայի հաջող ավարտման վրա:

ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐԿԱՐԱՆԸ ՄՈՐԻՒԼԻԶԱՑԻԱՅԻ ԺԱՄԱ-ՆԱԿ ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐ ՈՒՆԻ

Մօրիւլիդացիան տեղից հանում և ընդգրկում է աշխատավոր բնակչութեան ամենալայն մասսաները, ուստի և այդ մասսանե-րը կուսակցական-քաղաքական ազդեցութեամբ համալելու հար-ցը հիմնականն է քաղաքական ամրող աշխատանքը, նույն թիւում և խրճիթ-ընթերցարանի աշխատանքը կառուցելիս: Հետեւաբար, յերբ դրվում է քաղաքական աշխատանքի միջոցների ու յեղա-նակների հարցը, պատասխանն ինքն իրեն և դալիս, վոր կենտրո-նական տեղը պետք է դրավեն այն միջոցները, վորոնցով ամենից ավելի հեշտ է ընդգրկել աշխատավորների լայն մասսաները: Մասնայական աշխատանքի այդպիսի աշխատանքներ են՝ մի-տինգները, իմրական ազիտացիան, տեղեկատու աշխատանքը, մամուլը, կինոն, ռադիոն և մասնայական ժամանցները:

Մօրիւլիդացիայի ժամանակ սրբապաշտանքը տեղը դիւում է ա-զիտացիային: Այլապես չի ել կարող լինել: Կարճ միջոցում ընդգրկել աշխատավորների լայն մասսաները, նրանց համար հասկանալի դարձնել կուսակցութեան լողունները, մասսաները բարձրացնել մինչև հեղափոխական սխրագործութիւն, — միայն ազիտացիայով կարելի յէ:

Յեղնելով այս դրութիւն, հետադայում կընենք միայն ազի-տացիայի այն միջոցները, վորոնցով ոգտվում կամ վորոնց անց-կացմանը մասնակցում է խրճիթ-ընթերցարանը:

Մամուլը և ազիտացիոն նյութերը

Լրագրերը, թերթերը, կոչը, պլակատը, լողունը մօրիւլի-դացիայի ժամանակ ուղղակի ազիտացիոն աշխատանքի անփո-խարինելի միջոց են: Նրանք յուրաքանչյուր քաղաքացու ոգնում

են ավելի շուտ և ավելի ճիշտ դադարիար կադմելու կատարվող անցքերի մասին: Գյուղացին նրանցից խմանում է աֆն, ինչ նրան հետաքրքրում է, պատասխաններ է դառնում հաջող հարցերին: Քաղաքատալոնները նրանցից ոգտվում են ընթացիկ անցքերը, կուսակցության ու խորհրդային իշխանության քաղաքականությունը բոլորակապ: Գյուղի համար մամուլն ու աղիտացիոն նյութերը նրանով ավելի մեծ նշանակություն ունեն, վոր իրենցով լրացնում են աղիտացիոն ուժերի պակասը:

Ահա թե ինչու հատկապես անհրաժեշտ է հող տանել լրագրերը և աղիտացիոն նյութերն իր ժամանակին տեղ հասցնելու և տարածելու մասին: Առաջին հայացքից այդ տեխնիկական մասը հարց է, այնինչ նրանց շատ բան է կախված: Յերեակայեցեք, վոր մի վորեն գյուղ լրագրերն ու նյութերը մի ամբողջ որով ուշացել են: Այդ նշանակում է, վոր այդ գյուղի բնակչությանը մի ամբողջ որ կանգնի ամենատեսակ լուրերով: Կուլակներն ու հակախորհրդային տարրերը բարենպաստ հող կղանեն հակահեղափոխական գործունեության համար:

Չնայած մամուլի և աղիտացիոն նյութերի այդպիսի կարևոր նշանակությանը, վորոնական մորիլիցացիաների ժամանակ մենք մի ամբողջ շարք գնացքներ ենք ունեցել դեպի մամուլի միջոցների բաշխման ու տարածման գործը անուշադիր և ուղղակի անփութ զերարելով: Այսպես, որինակ, մի ուսյոնական կենտրոնում լրագրերն ու թերթիկները մի ամբողջ որ ձեռք չտված պատկեր են: Աշխատողներն ել հայտնում եյին, թե այդ գործով զբաղվելու ժամանակ չունեն:

Լրագրերի ու թերթիկների բաշխման խափանումը յերբեմն տույժ էր դալիս ամենաշնչին պատճառներէց: Մի տեղ ամբողջ յերեք ժամ հարկավորվեց, վորպեսզի աղիտացիոն նյութերը ստացվեն և դասավորվեն կապոց-կապոց: Այդ ամենը մի մարդ էր անում՝ ուսուցիչը: Ինքն ստանում էր, բացում, կապոց-կապոց անում, կապկապում, վրաները հասցեները դրում և այլն: Այնինչ այդ բոլորը կարելի յեր ընդամենը կես ժամում անել: Պետք էր միայն, վոր նույն ուսուցիչը աշակերտներից յերեքին կամ հինգին վերջներ ու նրանց հանձնարարեր իր անձնական հսկողության տակ կատարել տեխնիկական ամբողջ աշխատանքը: Նման անկազմակերպվածության, հնարաղիտության պակասությունն պատճառով ամբողջ յերեք ժամ կորցվել էր, այնինչ մորիլիցացիայի ժամանակ ամեն մի բուպեն թանգ է:

Մամուլի միջոցների տարածման խափանումը գրեթե յուրաքանչյուր քայլապարսն հնարավոր է թե ուսյոնում և թե գյուղում: Այդ բոլորը պետք է առաջուց նախատեսել, նշել մամուլի տարածման համար պատասխանատու անձներին և ինչպես պետք է հրահանգել նրանց:

Այդ աշխատանքն ավելի բարդ է ուսյոնական կենտրոնում: Լրագրեր ու թերթիկներ շատ են ստացվում. դրանք պետք է տարածել վոչ միայն իր գյուղի բնակչության մեջ, այլև ուսյոնի մեջ մոտող մյուս բոլոր գյուղերում: Այդ աշխատանքի համար պետք է նշանակել մի հատուկ մարդ, վորը կապվեր փոստի հետ, լրագրեր ստանար, կալմակերպեր նրանց բաշխումն ու ուղարկելը: Ինքը խրճիթվարը չպետք է գբաղվի այդ գործով: Նա առանց այդ ել շատ աշխատանք ունի: Մամուլի բաշխումը ուսուցչին հանձնարարել նույնպես խորհուրդ չի տրվում. նրա համար ևս ուրիշ բնագավառներում բավական աշխատանք կղանվի: Ավելի լավ է այդ նպատակի համար կոմյերիտականներից մեկին նշանակել: Այդ կոմյերիտականը տեխնիկական աշխատանքի համար իրեն ոգնալան ընտրում է աշակերտներ կամ պիոներներ:

Մամուլի բաշխման ցուցակը խրճիթվարին տալիս է ուսյոնապետը, լակ վորտեղ այդպիսին չկա, — Համկ(բ) կ ուսյոնի քարտուղարը: Խրճիթվարը ցուցակը տալիս է մամուլի բաշխիչին, հրահանգում է նրան և ստուգում է, թե արդյոք ամեն ինչ այնպես և կատարվում, ինչպես հարկավոր է:

Սովորաբար քիչ ժամանակ չի խլվում գյուղերը մամուլ հասցնելու միջոցներ դառնելու վրա: Այստեղ ուղղակի պետք է տեսլ, վոր խրճիթվարը յերբեմն սթանդակություն չի դտել աղամինիստրատիվ աշխատողների կողմից, վորոնք, դեպք է յեղել մատուցողական այսպես են վերաբերվել:

— Ի՞նչ, լրագրերը: Վոչինչ, կսպասեն: Յես ավելի շատ աղտական գործեր ունեն:

Յել այդ «կսպասեն» կարող է տեսլ յերկու ժամ, յերեք և ավելի: Նման շտապողականությունը հեռու չի տանի:

Խրճիթվարը լրագրեր և աղիտաբանություն տեղ հասցնելու համար ոգտվում է կապի սովորական միջոցներից: Ամենից առաջ պետք է ոգտադործել այն անձերին, վորոնք գյուղ են գնում ուսյոնից: Կամ Համկ(բ) կ ուսյոնի վորեն հանձնարարության: Յերկրորդ, պետք է աշխատանքի լծել ամեն մի ուղևորի, վորը վորեն բանի համար յեկել է գյուղից կամ գյուղ

ե դնում: Վերջապես, յեթե հիշյալ անձերից վոչ մեկին չի հա-
ջողվի գտնել, պետք է հատուկ սուրհանդակ ստանալ գյուղական
խորհրդից և նրա ձեռով ուղարկել:

Այդ բոլորի ժամանակ ամենալուրջ ուշադրութիւն պետք է
գործեն ագիտնյութերն առաջին պարտիան ուղարկելուն: Պետք
է այնպես անել, վոր այդ պարտիան տանի մօրի իղձ ց'այն մա-
սին հայտարարութիւնները տանող հատուկ սուրհանդակը: Այդ
հնարաւորութիւն կտա գյուղում ագիտացիոն աշխատանք ծա-
վալելու մօրիլիգացիայի մասին աղբարարելու հետ միաժամա-
նակ:

Սակայն ագիտնյութերը ժամանակին տեղ հասցնել՝ չի նա-
նակում դեռևս ամեն ինչ անել և դրանով էլ հանգստանալ: Պետք
է այդ նյութերը բնակչութեան մեջ կազմակերպւած տարածել
և նրանց շուրջը բացատրական աշխատանք տանել—դրանք գյու-
ղացուն հասկանալի դարձնել:

Բնակչութեան մեջ շատ անգրագետներ կան: Հարկավոր է
նրանց համար թերթիկ, կոչ կամ լրագր'ը կարգալ: Բայց հենց
գրագետներն էլ բոլորը չեն կարողանում գլուխ հանել ագիտ-
նյութերից առանց ուրիշների ոգնութեան և բացաւրութեան: Այդ
պատճառով չափազանց կարևոր է ագիտնյութերով առաջին հեր-
թին ազատել ագիտատորներին, բոլոր կուսակցականներին ու
կոմյերիտականներին և անկուսակցական ակտիւք, վորը կկարո-
ղանար բացատրական աշխատանք տանել:

Բացի այդ, յեթե հնարավորութիւն կա, պետք է հատուկ
կարգացողներ շնկել, վորոնց պարտավորեցնել բնակչութեան
համար կարգալ յուրաքանչյուր լրագիր, յուրաքանչյուր թեր-
թիկ: Կարգացողները պետք է խնամքով պատրաստւած լինեն
իրենց վրա դրված պարտականութիւնները կատարելու, վորի
համար, հենց բլիժի քարտուղարը կամ գյուղական խորհրդի լիա-
զորը լրագիրն ստանում է թե չե, նրանք հրահանգներ են ստա-
նում (անհատաբար կամ խմբովին) լրագրի, թերթիկի հետ կա-
տարելիք աշխատանքի բովանդակութեան հարցերի մասին:

Կարգացողից ի՞նչ կարելի չե պահանջել: Ամենից առաջ՝ վոր
նա ինքը լավ հասկանար կատարվող անցքերը և կարողանար
հանգամանորեն և քաղաքականապես ճիշտ բացատրել գյուղա-
ցիներին լրագրի մեջ կարգացածը: Կարգացողը պետք է ջոկի
քննութեանութեան նյութը, վորպեսզի ունենդիրներին համար յու-
սարանի այն եիմնականը, վոր ամենից ավելի չե հուզում նրանց:

Վերջին խնդիրը կարգացողից պահանջում է իմանալ վոչ միայն
լրագրի բովանդակութիւնը, այլև մօրիլիգացիայի կարգի հար-
ցերը, դարակոչվածի պարտականութիւնները և այլն: Լիովին
համանական է, վոր ունենդիրներն իրենք կարգացողին նման
հարցեր տան: Վատ կլինի, յեթե կարգացողը չկարողանա պա-
տասխանել դրանց: Վորպեսզի ունենդիրն ավելի լավ և ավելի
արագ րան հասկանալ յրազրական տեղեկութիւններից, կարողա-
ցողն իր աշխատանքի ժամանակ ոգտադործում է ժուրնա-լիցուս-
տրացիաներ և աշխարհագրական քարտեզ: Իր աշխատանքից
դատ, կարգացողը հասարակութեան մեջ թերթիկներ է տարա-
ծում և տեղական բլիժին և գյուղխորհրդին ոգնում և նրանց
տարօրջ աշխատանքի և մօրիլիգացիան հաջող ավարտի ու դոր-
ծում:

Բնակչութեան ագիտնյութեր պետք է բաժանել այն պիտ-
քում, յեթե յափանդապի ագիտնյութ կա: Լրագիրը պետք է
տալ վոչ թե առաջինը հանդիպողին, այլ նրան, ով կարող է այն
ոգտադործել բնակչութեան և դորակոչվածների մեջ բացատրա-
կան աշխատանք տանելու համար:

Ագիտնյութերն այնպիսի տեղերում են փակցվում, վորտեղ
սովորաբար հալաքվում է բնակչութիւնը, և կարգալու հարմար
բարձրութեան վրա: Հարկավոր է հեռանել, վոր թշնամական
տարրերը գիտաւորչալ չպոկեն ագիտնյութերը: Այդպիսի ամեն
մի պեղծի համար պետք է անհապաղ հաղորդել գյուղական խոր-
հրդին, վորպեսզի առձինխտրատիւ միջոցների գիմի:

Տեղեկատու աշխատանք

Տեղեկատու աշխատանքը քաղաքական աշխատանքի կարևոր
միջոցներից մեկն է, յեթե շնորհալի ձեռքերում է գտնվում: Մո-
րիլիգացիայի կապակցութեամբ գյուղացիների համար խիստ շատ
հարցեր են ծագում: Իր ժամանակին ճիշտ պատասխան տալ՝ այդ
նշանակում է գյուղացուն ոգնել կատարելու մօրիլիգացիայով
նրա վրա դրած պարտականութիւնները, նշանակում է նպաստել
մօրիլիգացիայի հաջողութեանը: Գյուղացուն պետք յեղած դործ-
նական տեղեկանքը չտալ՝ նշանակում է գցել տեղական իշխա-
նութեան հեղինակութիւնը, դժվարացնել մօրիլիգացիայի հու-
ջող անցկացումը:

Յեւ ահա փորձնական մօրիլիգացիաների ժամանակ մեզա-
նում հենց այդ միջոցն էր, վոր այնքան էլ հարթված չէր:

Փորձնական մորելիզացիաների ժամանակ տեղեկատու աշխատանքի հիմնական թերությունն այն էր, վոր գյուղացին տեղեկատու սեղաններում իրեն հետաքրքրող հարցերին պատասխան չէր գտնում: Տեղեկատու սեղաններում իբրև նյութ գտնվում էին՝ ՌՍՖՍՀ որենքների հավաքածուն, « ВЕЩОТА » թերթը գյուղատնտեսական մասին տեղականներով, տեղական թերթը, յերբեմն նույնիսկ այնպիսի առարկաներ, ինչպես՝ մանրագլխակ, ծանրաչափ, ազդոնումիայի զերտողական պիտույքներ, անա մաքուր անկյուն և այլն: Սակայն գյուղացին 99% հարց էր տալիս, վորոնք մորելիզացիային էին վերաբերում՝ դեռ արդյոք հավաքավայրը, պե՞տք է արդյոք հանձնվի իր ձին, թե վոչ: Տեղեկատու սեղանները մեծ մասամբ չէին կարող այդ հարցերին պատասխան տալ:

Փորձն այն է ասում, վոր տեղեկատու սեղանը պարտադրաբար պետք է այնպիսի նյութ ունենա, վորը բավարարի գյուղացուն ու գորակոչվողին հույսով կենսական այն հարցերին, վորոնք կապված են մորելիզացիայի հետ:

Հատկապես կարևոր է ապահովել սպառիչ տեղեկանքներ տալը մորելիզացիայի կարգի և գորահաղաքվողների ու ձիատերերի պարտականությունների մասին: Այդ հարցերի մասին պետք է խնամքով հրահանգված լինեն տեղեկատու սեղանների բոլոր աշխատողներն ու ագիտատորները:

Պակաս կարևոր չէ այն հարցը, թե ինչպիսի տեղում պետք է գտնվի տեղեկատու սեղանը և ինչպես տանի աշխատանքը: Յեթե, ասենք, տեղեկատու սեղանը տարբեր խրճիթ-ընթերցարանում, վորը գյուղխորհրդից հեռու չի գտնվում, դժվար թե տեղեկանքի համար մարդ գա: Պետք է այնպես անել, վոր տեղեկատու սեղանը գտնվի բնակչության ավելի շատ հավաքվելու տեղում:

Չպետք է կարծել, թե տեղեկատու աշխատանքը միայն տեղեկատու սեղանի աշխատողն է տանում: Այդ կաղմով դժվար թե կարելի լինի ամբողջ բնակչության ընդգրկել: Գործը պետք է պարտադրաբար այնպես դնել, վոր յուրաքանչյուր ագիտատոր տրասիսկ ու քաղաքական աշխատող (մանավանդ ագիտատորը) կարողանա տեղեկանքներ տալ հիմնական, կենսական հարցերի մասին, առաջին հերթին՝ մորելիզացիայի կարգի և գորակոչվողի ու ձիատերի շահերի անհնական պարտականության մասին:

Գյուղում ո՞վ է ղեկավարում ու կազմակերպում տեղեկատու

աշխատանքը: Յեթե գյուղում խրճիթ-ընթերցարան կա, ապա ավելի լավ է տեղակատու աշխատանք տանելը հանձնարարել խրճիթավարին իրեն, վորը եղանակյա հրավիրում է տեղական ուսուցիչներին կամ ամենից ավելի զարգացած կոմյերիտականներին: Անձնավորություններ ընտրելիս պետք է հաշվի առնել, վոր տեղեկատու սեղանի աշխատողը բավականաչափ հեղինակավոր լինի գյուղացիներին համար:

Այն գյուղերում, վորտեղ խրճիթ-ընթերցարան չկա, տեղեկատու աշխատանքը հանձնարարվում է ուսուցչին:

Միեթի ավելի բարդ է տեղեկատու աշխատանքի բանը ռաշոնական կենտրոններում, հավաքավայրերում և ձիերի խմբման կետերում:

Այստեղ ժողովուրդ շատ է հավաքվում: Տեղեկանքների կարգի մեծանում է: Սովորաբար տեղեկատու սեղանի մոտ են խոնվում այս կամ այն բացատրությունն ստանալ ցանկացողները: Հարկ է լինում հերթին շատ ապասեղու: Գյուղացու համբերությունը յերբեմն կտրվում է:

Փորձնական մորելիզացիաների ժամանակ տեղեկատու աշխատանքի մեջ յերբեմն իրարանցում էր լինում, վորովհետև տեղեկանքները միայն բանավոր էին տրվում: Շատ գյուղացիներ զիմում էին միանման հարցերով: Տեղեկատու սեղանի վարիչը ստիպված էր լինում միևնույն հարցին 40-50 անգամ պատասխանել: Դրանից հեշտություն կարելի չէր խուսափել. գործադրելով պահպանի ձևով գրավոր տեղականքը, տիպիկ բացատրությունների ամփոփումները, հայտարարություններ և այլն:

Մասնավորապես, հանձնարարվում է տեղեկանքների սեղանի մոտ աչքի ընկնող տեղում հետևյալ նյութերը կախել.

ա) մորելիզացիայի մասին հրամաններ և հայտարարություններ.

բ) ցուցումներ գորակոչվողների ներկայանալու և ձիեր ու գումակ մատակարարելու կարգի մասին.

գ) գորակոչվողների և ձիատերերի պարտականությունների ցուցակը.

դ) տեղեկանք իրենց հետ բերվող զգեստեղենի և հանդերձանքի գների մասին, բերվող ձիերի, սայլակների և լծասարքի գների մասին.

ե) զորակոչվողներին ընտանիքների արտոնությունների մասին և այլն:

Շատ ցանկալի յե «Ուլ պիտի ներկայանա» պլանատ, վորը վրա փակցնել ներկայանալու յենթակա զինապարտների ռազմա-հաշվառման դրքույկների նմուշներ: Գյուղացին այդպիսի պլանատից ավելի շուտ բան կհասկանա:

Փորձնական մորիլիզացիաների ժամանակ հաճախ դեպքեր են յեղել, յերբ գյուղացիները վոչ մի կերպ չեյին կարողանում զոտնել տեղեկատու սեղանները, կամ պարզապես չեյ ն կարողանում հետանալ ձիուց (այդ վերաբերում է մանավանդ ձրերի խմբման կետերին): Այստեղ տեղեկատու սեղանը պետք է ավելի ճկունություն ու շարժունակություն ցուցաբերի: Ձի կարելի սահմանափակվել նրանով, վոր սարքես տեղեկատու սեղանը և պասես, թե յերբ են գալու քեղ մոտ: Պետք է տեղեկագրի առաջ մտնել մասսաների մեջ: Տեղեկատու սեղանն այդ նպատակի համար պետք է հավաքագրի հատուկ անձնավորությունների, գլխավորապես ագիտատորներից, նույնպես և զորակոչվողների պարտիաների հետ յեկամ կուսակցականներից ու կոմյերիտականներից, վորոնց հանձնարարի զորակոչվածների ու բնակչության հավաքման դանազան տեղերում տեղեկանքներ տալ:

Պատի թերթը

Վորեն գործ թաղելուց ել պարզ բան չկա: Մեղանում այդ և վիճակում հաճախ այնպիսի ոգտակար մի գործի, ինչպիսին պատի թերթն է: Վերցնենք, որինակի համար, մի ռայոնում փորձնական մորիլիզացիայի ժամանակ լույս ընծայած պատի թերթը: Լրագրողները ջանք եյին գործադրում, չեյին քնում գիշերը, գրում եյին: Արտաքուստ թերթը կարծես, վոչինչ, բանի նման եր, սակայն վոչ մի հաջողություն չունեցավ: Այն գրեթե վոչոք չեր կարդում: Մեկն ու մեկը մոտենում եր, նայում, յերկու-յերեք տող կարդում, «բոսիոյման» հեռանում:

Ինչո՞ւմն է բանը: Հենց նրանում, վոր թերթում այնպիսի նյութ եյին գետեղել, վորը գյուղացու խելքին ու սրտին բան չեր ասում, չեր պատասխանում նրան հուզող հարցերին:

Տեղական կյանքից վոչ մի փաստ չկար՝ այն մասին, թե ինչպես և գնում փորձնական մորիլիզացիան տվյալ գյուղում, ինչպիսի թերություններ պետք է վերացնել, ինչի գեմ պետք է պայ-

քարել: Թերթը կաղմվել եր ամենարյուրողատիկ կերպով. վերջերև եյին մորիլիզացիայի մասին հայտարարությունը, հրամանը, կոչը և հողվածների մեջ տվել եյին նրանց բովանդակությանը, սյուսմե կրկնությունը, ու յերբեմն այնպես եյին «այլաձևել», վոր դժվար եր լինում հասկանալ, թե խոսքն ինչի մասին է:

Թերթը կաղմակերպում է գյուղի հասարակական կարծիքը մորիլիզացիայի պրակտիկ անցկացման շուրջը: Նա նշում է մորիլիզացիայի ընթացքն արգելակող անձերին ու վատերը՝ նրա կայացնելուց ու ձիերը հանձնելուց խուսափողներին, հարեցողներին, սրիկաներին, պրոպագանդիստ լուր տարածողներին և այլն: Ահա այդպիսի լուրերից մեկը.

ՀԱՆՑԱԴՈՐՄՆԵՐԸ ԼԱՍՏԻ ՎՐԱ)

Կարպովո գյուղում ամենակարևոր մոմենտին, յերբ պետք եր հարևան գյուղերից յեկող զորակոչվածների պարտիաները գետով անցկացնել, լաստանավը կանգնեց:

Ինչո՞ւմն է բանը: Բանից դուրս յեկավ, վոր նավորդները շատ խմելուց տեղից յեղնել չեյին կարողանում:

Յերբ սկսեց գործը քննել, պարզվեց, վոր նավորդներին հարեցնողը յեղել է մի անհայտ անցվորական:

Դժվար է այդ ամենին հավատալը, բայց փաստարարությունն առկա յե: Ում վոր է թշնամական ձեռք ուղում է մեզ խանդարել մորիլիզացիան անցկացնելու:

Ընկերներ, արթուն յեղեք:

Աչքերը չորս արևք: Հիշեք, վոր թշնամին վոչ միայն ճակատումն է, այլև մեր մեջ: Թշնամի յե ամեն վոր, ով արգելում է մորիլիզացիայի անցկացումը: Ն. ԿԱԶԼՈՎ

Այդ լուրի տված ոգուտը կասկածից դուրս է: Լուրը հասարակական կարծիքը բևեռում է թշնամիների գործողություններին, բնակչությանը ցույց է տալիս, թե վորտեղ պետք է վորոնել նրանց:

Պետք է հարվածել պակասությունները, վորպեսզի ավելի շուտ վերացնենք դրանք: Սակայն չպետք է մոռանալ նաև գյուղացիներին՝ մորիլիզացիայով իրենց վրա դրված պարտականությունները որինակելի կերպով կատարելու դրական փաստերի լուսարանումը: Այդպիսի փաստերը ցույց կտան, թե ինչպես պետք է վարվի գիտակից քաղաքացին: Լավ որինակին կհամանեն և ուրիշ գյուղացիներ:

1) Լուրը զետեղված եր գյուղական պատի թերթերից մեկում փորձնական մորիլիզացիայի ժամանակ:

Հենց վոր հայտարարեցին մորիլիդացիայի մասին, լացին վերջ չկար: Դեռ վերջը կարգին չգիտի, թե ինչ է պատահել, ուժ են գորահավորում, բայց ազգեն սուգ ու շիվանն ընկել է:

Ահա Մարքոս Սիլվերովան. յա հեծկտալով լալիս է հենց նույն, ընկերության համար, չնայած վոր նրանից վաղվոքի տանում չեն: Ինչի մասին են լավի, իրենք էլ չգիտեն:

Իսկ նրանց նայելով՝ յերեխաներն էլ են լալիս: Այդ ամենն, իհարկե, հայրենիքն էլ է ազդում:

Իսկ այ, յերբ կտնայք ժողով սարգեցին, բոլորովին այլ բան ստացվեց: Մատրոնա Սալիբոգոսովան, Կլաշուխ Վլասովան, Աննա Նիկիֆորովան հայտնեցին, վոր նրանք էլ չեն կարող կուսակցությունից դուրս մնալ և հայտարարություն են տալիս իրենց կոմունիստների կուսակցության մեջ ընդունելու մասին, քանի վոր կուսակցությունը գործով ցույց է ավել, վոր ինքը աշխատավորների միակ պաշտպանն է:

— Բացի դրանից — նրանք ասացին — մենք անալիսն ենք անդամագրվում ԽՍՀՄ-ի Կոմունիստական կուսակցության և գնում ենք ճակատ:

Նրանց հայտարարությունը ամենքի կողմից հիացմունքով ընդունվեց:

Այ ուժից պետք է որինակ վերցնել: Կնոջ վրա պատերազմի ժամանակ չաս աշխատանք է ընկնում:

Բաժանված է լաց լինեք: Ավելի լավ է գործի անցնեք:

Ի. ԺՈՒԿՈՎ

Վո՞րն է այդ հողավածների արժեքը: Դրանք նրանով են լավ, վոր տեղական կյանքից առած փաստերով սովորեցնում են, թե ինչպես պետք է վարվել և ինչպես պետք է գիտակից քաղաքացին իր պարտքը կատարի խորհրդային յերկրի և բոլոր աշխատավորների առաջ:

Այժմ միջանի խոսք այն մասին, թե յերբ և ինչպես պետք է լույս տեսնի պատի թերթը:

Փորձնական մորիլիդացիաների ժամանակ մեծ մասամբ չտալով եյին լույս ընծայել պատի թերթերը: Սկսում եյին դրանք զբեկ մորիլիդացիայի մասին հեռագիրն ստանալուց հետո անմիջականորեն, համենայն դեպս մորիլիդացիայի մասին հայտարարությունը բնակչությանը հայտնի լինելուց առաջ: Պարզ է, վոր տվյալ դեպքում տեղական վորեւ փաստերի մասին խոսելու հարկ չի լինում: Լրագրողներն ստիպված է ին լինում մորիլիդացիայի մասին հրամանը, կոչերն ու ազդեցություն նյութերը:

¹⁾ Լուրը զետեղված է գյուղական պատի թերթերից մեկում փորձնական մորիլիդացիայի ժամանակ:

վերապատմել: Դժվար թե մեկնում եյին այդ աշխատանքը պետք լինի: Գյուղացիներն առանց պատի թերթի էլ կծանոթանան այդ նյութերին: Մեղ թվում է, թե ավելի նպատակահարմար է՝ առաջին պատի թերթը մոտավորապես մորիլիդացիայի անալիզին որևէ կեսին լույս ընծայել: Պատի թերթի առաջին համարի համար կողտադործվեն մորիլիդացիայի մասին ազդարարելու ժամանակ, հավաքություն կամ նրանից հետո յեղած փաստերը:

Պետք է նշել, վոր մորիլիդացիայի ժամանակ պատի թերթի տմեկաբեղունելի տիպը «Իլյիչովկան» է: Այն հնարավորություն է տալիս որակյան միջանի անդամ նյութը նորոգելու, վոր մորիլիդացիայի ժամանակ աշխատանքի համար շատ կարևոր է: Անհրաժեշտ չէ նյութը վերանայելու համար ժամանակի վորոշ միջոցներ սահմանել: Ամեն ինչ կախված է տեղական պայմաններից: Յեթե տվյալ պատի թերթի նյութին արդեն ծանոթացել է բնակչությունը մեծամասնությունը, հարկավոր է լիակատար փոփոխում կատարել: Յեթե ավելի հրատապ ու կարևոր նյութ է յերևացել, քան պատի թերթի մեջ գետեղածն է, պետք է մոտենալի փոփոխություն անել, ավելի քիչ հետաքրքրական հոդվածները փոխարինելով ավելի ոգտակար նյութով:

Պատի թերթը մեծ ուշադրություն պետք է նվիրի գաղափարախոսությանը ու բնակչության կողմից ուղղմական դադտնիքը պահելու պրակտիկ հարցերին: Յեղ հասկանալի յե, խրճիթվարի հատուկ հողատարությունն առարկան պետք է լինի ամենախիստ հողակողությունն այն բանին, վոր պատի թերթն ինքը ուղղմական գաղտնիքներ և այնպիսի փաստեր դուրս չտա, վորոնք կարող են մորիլիդացիայի ընթացքին վնասել:

Կիմոն և ռադիոն

Շատ լավ է, յեթե ուսուցում չըջիկ կինո կա: Կինոն կարող է մեծ դեր խաղալ գորակողությունների ու բնակչության առույգ տրամադրությունն ստեղծելու գործում:

Յեթե հնարավոր լինի, պետք է այնպիսի կինո-նկարներ ընտրել, վորոնք իրենց բովանդակությամբ հարմար լինեն մորիլիդացիային կամ գոնե նրան մոտ հարցերին (քաղաքացիական պատերազմի թեմաներով):

Պետք է այնպես անել, վոր ուսուցական խրճիթ-ընթերցարանի չըջիկ կինոն աշխատի անընդհատ, գյուղից-գյուղ փոխա-

գործելով, աղաքիսով ապաստարկելով ըստ հնարավորութեան ա-
վելի շատ բնակավայրեր: Յերեկը շարժական կշնոն կարող է
աշխատել փակ շենքում (գալոցում, խրճիթ-ընթերցարանում,
սրահում և այլն): Շարժական կինոն ցերեկով այս կամ այն
գյուղին ուղարկելիս պետք է հաշիւ առնել այնտեղ հարմարավոր
շենքի առկայութիւնը, վորպեսպէս շրջիկ կինոն դուր տեղը չգնա-
ղա, ինչպէս այդ հաճախ պատահում էր փորձնական մօրէլիզա-
ցիաների ժամանակ:

Մօրէլիզացիայի սկզբում շրջիկ կինոն սպասարկում է գյու-
ղերը: Յեւթ առաջին հերթին՝ ամենից ավելի հեռավոր տեղերն ու
վայրերը, վորոնք վորեւէ քաղաքական նկատառումներով պա-
հանջվում է սպասարկել առաջին հերթին: Մինչև զորակոչված-
ներէ պարտիաները ռաշոնական վայր հասնելը շրջիկ կինոն սա-
յոնական կենտրոնն է վերադառնում:

Նկարները ցույց տալուց առաջ սարքվում է փոքրիկ միտինգ,
վորտեղ յեւույթ են ունենում տեղական աշխատողները և յեկվոր
ազիտատորները: Ավելի լավ է շրջիկ կինոյի հետ ուղարկել քա-
ղաքից յեկած ազիտատորներից մեկին, վորի վրա հենց դնել կի-
նո-ֆիլմը ցույց տալուց առաջ ազիտացիոն աշխատանք տանելը:

Շրջիկ կինոն պետք է ոգտադործել բնակչութեան մեջ տպա-
գիր ազիտացիոն նյութեր, լրագրեր ու գրականութիւն տարու-
ծելու համար:

Վատ չի լինի, յեթէ շրջիկ կինոյին կցվի ռադիօ ևս (շրջիկ
կինո-ռադիօ): Այդ դեպքում կինոյից առաջ կազմակերպվում է
ռադիօյի մասսայական ունկնդրում:

Ընդհանրապէս ռադիօն դյուղում մօրէլիզացիայի ժամանակ
հսկայական նշանակութիւն ունի: Ռադիօն կարող է ազիտացիոն
սքանչելի միջոց ծառայել: Ռադիօյի միջոցով կարելի յէ ամենա-
արագ ինֆորմացիա ստանալ այսօրվա օրի անցքերի մասին: Ռա-
դիօն օրվա չարիքի ռեպերտուար էլ է տալիս գեղարվեստական
աշխատանքի համար: Ռադիօ-համերդները զորակոչվողներին և
բնակչութեանն զբաղեցնելու գործում մեծ ծառայութիւն կ'ա-
տուցեն: Մի խոսքով՝ հանձին ռադիօյի մենք անփոխարինելի և
ամենաարագ ողակի հետ գործ ունենք, վորը կենտրոնը միաց-
նում է ամենահետընկած գյուղի հետ:

Ռադիօ ունեցած դեպքում ավելի քիչ սարսափելի յէ մօրէ-
լիզացիայի առաջին օրվա համար ազիտացիոն նյութերի ու լրա-
գրերի բացակայութիւնը կամ ուշացումը: Լավ է, յեթէ խրճիթ-

ընթերցարանը բարձրախոս ունի: Այդ դեպքում ռադիօյի մասսա-
յական ունկնդրում է սարքվում: Յեթէ բարձրախոս չկա, այլ կա
միայն ռադիօ-ընդունիչ ականջակալներով, ապա ռադիօյի մաս-
պետք է մշտական հերթապահութիւն սահմանել: Հերթապահը
գրանցում է ստացված տեղեկութիւնները, վորպէսզի հետո ա-
մեն բանի մասին իրազեկ անի բնակչութեանը: Այդ նպատակով
ռադիօ-ամփոփումը անփոխարինելի միջոց է: Այն գլխում է մի
մեծ թերթ թղթի վրա խոշոր տառերով և կախվում է աչքի ընկ-
նող մի տեղ այնպէս, վոր ամենքը կարողանան կարդալ: Զի
խանդարի, յեթէ ռադիօ-ամփոփումի վերելը թեկուղ սքեմատիկ
մի քարտեզ լինի, վորտեղ դրոշակներով նշանակվեն այն վայրե-
րը, վորոնց մասին ռադիօ-ամփոփման մեջ խոսվում է:

Սակայն ռադիօ-ամփոփման մեջ պետք է միայն ամենահիմ-
նականի մասին խոսել: Նրանում շատախոսելու տեղ չկա: Մա-
նավանդ, յերբ թուղթը քիչ է: Այնինչ ռադիօյով տեղեկութիւն-
ներ շատ շատ են ստացվում: Այդ դրութիւնից յեւթ կարող է լի-
նել ինֆորմացիան բարձրաձայն անելը: Դրա համար առաջուց
հայտարարվում է, թէ այս-ինչ տեղում, այս-ինչ ժամանակ կար-
դացվելու յեն ռադիօյով ստացված տեղեկութիւնները: Յանկա-
ցողներին խնդրում են գալ:

Ռադիօ-լուրերը ազիտատորն է կարդում, Համկ (Բ) Կ Բջիջի
քարտուղարը կամ գյուղխորհրդի լիազորը, վորովհետեւ ընթերց-
ման ժամանակ և նրանից հետո կարիք կ'լինի բացատրութիւններ
տալու, գուցէ և զրուցելու:

Ռադիօ-լուրերի ընթերցումը նույնպէս պետք է համատեղել
ուրիշ վորեւէ ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի
հետ, օրինակ՝ կինո-նկար ցույց տալու, ներկայացման, ազիտ-
նյութեր տարածելու և այլն:

Դրադարանային աշխատանքը

Գիրքը քաղաքական մասսայական աշխատանքի մեջ մօրէլի-
զացիայի ժամանակ ավելի քիչ նշանակութիւն կ'ունենա, քան
մամուլի ուրիշ միջոցները: Մեծ գրքեր կարդալու ժամանակ չկա:
Սակայն մոմենտի խնդրներին համապատասխան մի գիրք, վորը
զորակոչվածին աշխատանքի պրակտիկ ցուցումներ է տալիս,
անպայման հաջողութիւն կ'ունենա: Այդպիսի գրքերից է՝ «Հու-
շատետր զորակոչվածներին», մեր հակառակորդների մասին,
առաջին ոգնութիւն հասցնելու, ռազմերթի առողջապահութեան

մասին, այն մասին գրված բրոշյուրները, թե ինչպես պաշտպանվել ողաքխախտ հարձակումից և այլն:

Պետք է լայնորեն ոգտագործել գիրքն իբրև ձեռնարկ տեղեկատու աշխատանքի համար, ագիտատորների, կարգացողների ու աշխատողների համար, վորոնք զեղարվեստական յեկույթներ են կազմակերպում:

Խրճիթ-ընթերցարանի գրադարանում (դեռ խաղաղ ժամանակ) պետք է առաջուց պատրաստված լինի մոբիլիզացիայի ժամանակի աշխատանքի համար անհրաժեշտ գրականության ցուցակը:

Խրճիթ-ընթերցարանը մոբիլիզացիայի մասին տեղեկություն տանալուն պես անհապաղ (աշխատանքի համար ամենից ավելի հարմար տեղում) գրքերի ցուցահանդես է սարքում՝ պատերազմի և մոբիլիզացիայի հետ կապված հարցերին նվիրված: Ուր-ճիթվարի հատուկ ուղադրությունը պետք է դարձվի այդ գրականությունը գիտենալու վրա: Նա պետք է յուրաքանչյուր քաղ-լուսաշխատողի և խրճիթ-ընթերցարանի ակտիվիստի ողնի արագորեն գտնելու հենց այն, ինչ պահանջվում է աշխատանքի համար: Բացի պատերազմի և խորհրդային Միության պաշտպանութ-յան վերաբերյալ, մեր հարևանների մասին, մեր արտասահ-մանյան բարեկամների մասին և միջազգային դրության մասին գրքերից, ցուցահանդեսում պետք է լինեն այն բոլոր նյութերը, վոր անհրաժեշտ են զեղարվեստական աշխատանքի մեջ ոգտա-գործելու համար, այն է՝ պիեսներ, յերգարաններ, կարմիր-բա-նակային սրախոսություններ, կատակներ, անեկդոտներ և այլն:

Գեղարվեստական աշխատանքը և գվարնալիֆները

Հարազատների ու ծանոթների առաջիկա պատերազմ դնալը, վտանգը նրանց կյանքի համար, յերկյուղը տնտեսության մա-սին—բնական վողելքում են առաջացնում, կանանց ու մայրերի արցունքներ: Այդ ամենը անդրադառնում է զորակոչվածների բարոյական կացության վրա, իջեցնում է նրանց տրամադրու-թյունը:

Նրան սերտորեն կապված է զորակոչվածների ճեֆ անելուն, ուրախանալու ցանկությունը: Առաջնեղը, ցարական ժամանակ-ներում, այդ ցանկությունը սովորաբար արտահայտվում էր

հարբեցողության, անկարգությունների, տուրուղմփոցի, հար-բած՝ գյուղի վողոցները նվազելով չըջելու, հարբած յերեկույթ-ներ սարքելու մեջ և այլն: Փորձական մոբիլիզացիաների ժա-մանակ այդպիսի զեղքերը բացառություն էյին միայն: Հարբած-ներ շատ քիչ էյին յերեկում: Սակայն չեր կարելի յերաշխալորել, թե իսկական մոբիլիզացիայի ժամանակ այդպիսի զեղքերը չեն շատանա և, իբրև հետևանք, անպայման կբարդացնեն մոբիլի-զացիա անցկացնելու գործը:

Հին ղևնվորադրման մնացորդների՝ հարբեցողության, ան-կարգությունների, տուրուղմփոցի գեմ և այլն վճառական պայ-քար մղելու գործում մեծ նշանակություն կունենան գվարնալիքի խեղացի ու հետաքրքրական ձևերը՝ կլինոն, ռադիոն, նվադարան-ները, պարերը, յերգեր յերգելը՝ ներկայացումները, կարմիր տիկնախաղը:

Փորձական մոբիլիզացիաների ժամանակ հատկապես վատ եր զեղարվեստական աշխատանքի ու գվարնալիքների բանը: Մեղանում հաճախ աշխատանքի այդ ճյուղին նայում են իբրև գվարնության վրա:

Ահա մի ռայոնի հավաքավայրից առած մի ուրինակ: Շատ ժողովուրդ եր հավաքվել: Յեկել էյին վող միայն նրանք, ով պետք է ներկայանար, այլև նրանց ընտանիքները և, վերջապես, պարզապես ծանոթները: Նրանք ամբողջ ուր տեղից—տեղ էյին դնում, հավաքնվայրից ձիերի խմբման տեղը, նայում էյին, թե ինչպես են ստուգում ներկայանալը, և ձիեր են ընդունում: Նը-րանց հետ գրեթե վող մի աշխատանք չեր տարվում: Նույնիսկ նվադարան չկար: Յերգ ել չեր լովում: Այնինչ շատ յերիտա-սարգություն եր հավաքվել: Նրանք գեմ չէյին ուրախանալուն, յերգելուն, խաղալուն: Միայն յերեկոյան դեմ, յերբ ամենքը հողնել էյին և առանց այդ ել շուտով պետք է գնային քաղաք, դպրոցում ներկայացում սարչեցին: Պիեսը մոբիլիզացիայի հետ վող մի առնչություն չուներ և այնքան ել վատ խաղացվեց, վոր գորակոչվածների մեջ գայրույթից ու հայհոյանքից ավելի բան չհարուցեց: Խաղամիջոցներին մեկը զուր տեղը փորձում եր յեր-գեցողություն կադմակերպել, բայց դրանից բան դուրս չեկավ: Յերգում եր միայն կոմյերիտականների մի փոքրիկ խումբ, իսկ մյուսները չէյին ել ձայնակցում:

Ահա թե ուր կհասցնի անժամանակ և թույլ կազմակերպված աշխատանքը: Փոխանակ զորակոչվողների արամադրությունը

բարձրացնելու, այն ընդունակ է վնասելու մոբիլիզացիայի հաջողութեանը:

Ամառ ժամանակ զեղարվեստական մասնաշաղկան աշխատանքով պետք է փոփոխ յեղնել: Ձմեռը զեղարվեստական աշխատանքի հնարավորութիւնները միջին կրճատվում են նրանով, վոր նրա անցկացումը չենքի առկայութեան հետ է կապված (խրճիթ-ընթերցարան, ժողովրդական տուն):

Գեղարվեստական աշխատանքի ձևերից պետք է ոչտազործել՝ փոքրիկ ինսցեններովկա, ագիտկա, լուրով, տիկնախաղ, խաղեր ու պարեր, յերգեր ու շուտասելուկներ, յերգիծարանական պատմվածքներ:

Մոբիլիզացիայի ժամանակ նոր ռեսուրսներ պատրաստելու ժամանակը չէ: Հիմնականում պետք է լայնորեն ոգտադործել առաջուց պատրաստած բեմադրութիւնները, լրացնելով դրանք բարդ հարմարութիւններ ու աւական պատրաստութիւն չպահանջող ագիտկաներով որովա չարիք հարցերի մասին:

ԻՆՏՊՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆԲԸ

Մոբիլիզացիան կարճ է տևում: Ժամանակը քիչ է, իսկ դործ չատ պետք է անել: Վաղաշառանքով պետք է արագ ընդգրկել բնակչութեան ու զորակազմի մեծ մասնասներ: Ամեն մարդ այս կամ այն տեղեկանքի կարիքն ունի, ամեն մեկին վորեն ու ժանդակութիւն կամ ունութիւն է պետք: Մյուս կողմից այնքան էլ չատ չեն աշխատողները, վորոնք կարողանային քաղաշխատանք տանել գյուղում: Յուրաքանչյուրի վրա քիչ պարտականութիւններ չեն դրվում: Յերբեմն աշխատողը ուղղակի ստիպված է լինում «մաս-մաս լինել»: Այդ պայմաններում աշխատանքի մեջ պահանջվում է խիստ պլան, աշխատանքն ընկերների մեջ այնպես բաշխելու շնորհ, վոր յուրաքանչյուրը կարողանա կատարել այն, պահանջվում է ճշտութեամբ նշել աշխատանքի ժամանակը, ժամկետները և տեղը, կարգի բերել կատարման ստուգումը, յուրաքանչյուր աշխատողի իր ժամանակին հրահանգումը և ոգնութիւնը: Խելքը գլխին, հասկանալի ու սպառիչ հրահանգումն առանձնապես անհրաժեշտ է, վորովհետև կատարողների մեծամասնութիւնը անբավարար ե՞պատրաստված մոբիլիզացիայի ժամանակ աշխատելու:

Իսկ մենք ի՞նչ ենք տեսել փորձնական մոբիլիզացիաների ժամանակ: Խրճիթվարը զժապիժ դեռ ու գեն էր ընկնում: Նրա պարտականութիւններին հաջիվ չկա. արի թե տեղեկատու աշխատանքը կազմակերպիր, թե պատի թերթը լույս տեսցրու, թե աղիտնյութերը բաշխիր. կինո-նկար ցույց տուր. ժամանցներ կտրիակերպիր. զեղարվեստական սպասարկումը նախապատրաստիր. պետք է գյուղխորհուրդն ու խրճիթ-ընթերցարանն էլ դարդարել. պետք է ռադիոն աշխատեցնել և այլն:

Կարելի չէ առաջուց ասել, վոր մի մարդն այստեղ բան չի կարող անել: Իսկ մեր խրճիթվարն ամեն բանի ձեռք էր զարնում, և այնուամենայնիվ չատ քիչ ոգուտ ստացվեց: Այլ կերպ չի ել կարող լինել: Մենակ մի թերթ լույս ընծայելու վրա հենց յերեք մարդ պետք է հատկապես դրաղվեն: Այդպես էլ ամեն մի այլ աշխատանք: Այստեղ գլխավորն այն չէ, վոր ամեն ինչ ինքն անի, այլ վոր աշխատանքի յուրաքանչյուր տեսակի համար իրեն հարմար ոգնականներ ընտրի և զեկավարի նրանց: Այն ժամանակ աշխատանքն ալելի արագ կերթա և ալելի լավ արդյունքներ կտա:

Վատ է միքանի «պետերի» հետ գործ ունենալը: Ալելի վատ է, յերբ նման պատմութիւն մոբիլիզացիայի ժամանակ է լինում, յերբ հատկապես գործողութիւնների ճշտութիւն, պարզորոշութիւն և արագութիւն է պահանջվում: Ահա թե ինչու խրճիթվարին պետք է զեկավարի միայն տեղական կուսակցական ընդհի քարտուղարը, իսկ վորտեղ այդպիսին չկա, ապա հատուկ մի անձ—գյուղխորհրդի լիազորը, վորին հաստատում է Համկ (բ) Կ ուսկիմը:

Մոբիլիզացիայի մասին տեղեկադրութիւն ստանալուց հետո խրճիթ-ընթերցարանի վարիչը ներկայանում է այն անձին, վորին ստորադասված է, և նրանից նյութեր ու ցուցումներ է ստանում քաղաքական աշխատանքի լողունքների ու բովանդակութեան մասին (համաքաղաքական հարցեր և հատկապես տեղական նշանակութիւն ունեցող հարցեր, վորոնք կապված են տվյալ ռայոնի քաղաքական կացութեան հետ), խրճիթվարի վրա դրվող միջոցառումների ցուցակը (աշխատանքի ընդհանուր պլանից), նրանց կենսագործման ժամկետները, տեղը և ժամանակը, այն աշխատողների ցուցակը, վորոնց կարելի չէ ոգտադործել: Խրճիթվարը պետք է հիշի, վոր «չտապես, ծիծաղատեղ կդառնաս»

և վոր ամէլի կարևոր է, չտապեն, կխառնեն, աշխատանքն ինչ-
պէս պետք է չես կատարի: Փորձնական մօրիլիդացիաների ժա-
մանակ հաճախ այդպէս ել յեղել է: Վաղ ե տալիս խրճիթվարը
բջիջի քարտուղարի մօտ, չտապում է, ինչպէս հարկն է բան չի
իմանում, չի հարցնում, հետ ե վաղում խրճիթ-ընթերցարան,
իսկ յերբ աշխատանքի յե անցնում, բանից դուրս ե գալիս, վոր
մի բան պարզ չէ, մի ուրիշը՝ չշխտի ինչպէս անի: Յե՛վ մեր խր-
ճիթվարը նորից քարտուղարի մօտ ե վաղում ցուցումներ ստա-
նալու: Այսպէս ժամանակն անցնում ե անմխտ վաղվոցով: Չկա
այն բանը, վոր միանգամից ամեն ինչ կշռադատի, հարցնի, գրան-
ցի ե գրանից հետո միայն գնա, ե նույնպէս խնդր գլխին,
հանդամանորեն առաջադրանքներ անի ուրիշներին: Լիուլի բա-
վախան է, յեթե խրճիթվարը բջիջի քարտուղարին աշխատանքի
ընթացքի մասին որը մի անգամ կամ, ծայրահեղ դեպքում, յեր-
կու անգամ հաղորդի: Բջիջի քարտուղարն ինքն զբաղված կլինի,
ե նրան դաննէն այնքան ել հեշտ չի լինի: Ահա թե ինչու խրճիթ-
վարն ամեն ինչի մասին պետք ե միանգամից խոսի-ալծնի, վոր-
պէտքի հետո չվազվզի ու նորից ու նորից հարցնի: Խրճիթվարի
համար ամենակարևորն է՝ լավ պարզել ազիտացիայի բովանդա-
կութիւնը, կուսակցութեան լողունները, տեղական կյանքի այն
հարցերը, վորոնց շուրջը պետք ե աշխատանք տանել:

Խրճիթ-ընթերցարանի աշխատանքի համար տեղ բնորոշուց
ել շատ շատ բան ե կախված: Փորձնական մօրիլիդացիայի ժա-
մանակ խրճիթ-ընթերցարանի աշխատանքը հաճախ վիժում եր
ներանից, վոր նրա շենքը հեռու յեր լինում գյուղխորհրդից կամ
ուսուցչործկոմից: Պետք ե կանոն դարձնել. խրճիթ-ընթերցարանի
աշխատանքը դուրս տանել բնակչութեան ու գորակոչվողներին
ամենից ամէլի շատ հավաքվելու տեղերը: Ամառն այդ անէն ա-
վելի հեշտ ե, վորովհետեւ մեծ մասամբ կարելի յե աշխատանքը
կաղճակեալել բացօթյա: Չմեռը գործը բարդանում ե, թեկուզ
հենց այն կուսակցութեամբ, վոր դժվար ե գյուղում այնպիսի
չենք գտնել, վորտեղ կարելի լինի ամբողջ բնակչութեանը հավա-
քել: Ամենամեծ շենքն ել հենց գարոցն ե կամ խրճիթ-ընթերցա-
րանը: Ուսկայն միշտ ել նպատակահարմար չե նրանց մեջ տանել
ամբողջ աշխատանքը: Տեղեկատու սեղանն, որինակ, ամէլի լավ
ե կաղճակեալել գյուղխորհրդին կից, ուր զինապարտներն ու
միաստերերը գալիս են իրենց գործերով: Իսկ յերբ վորսե ժողով
կամ յերեկույթ ե լինում, տեղեկատու սեղանը փոխադրվում ե

այն շենքը, վորտեղ աշխատանքի այդ ձևերն են անցկացվում:
Այսպիսով տեղեկատու սեղանը պետք ե լինի շատ ճկուն կաղճա-
կեալութեան, հեշտ փոխադրվող այն տեղը, վորտեղ ժողովուրդ
ամէլի շատ կա:

Հիշված շենքերից դատ, խրճիթ-ընթերցարանն աշխատանք
ե տանում նաեւ յուրաքանչյուր գյուղացիական խրճիթում (ձմե-
ռը) ե «արեկուղի» տեղերում խրճիթների առջևը (ամառը): Այդ
աշխատանքը կայանում ե թեկուզ լրագրեր կարդալում, ուղի-
յով ստացված տեղեկութեաններ տարածելում, հակահեղափո-
խական լուրերը մերկացնելում, յերդ ու պար, խաղեր ե այլ
յվարճալիքներ կաղճակեալելում:

Խրճիթ-ընթերցարանի ամբողջ աշխատանքի մեջ ճշտապա-
հութեանն ու կանոնավորութեանը շատ կարևոր դեր են խաղում:
Յեթե, որինակ, հավաքուլթից հետո խնույն չսկսել տեղեկատու
սեղանի աշխատանքը, բոլոր գյուղացիները տեղեկանքների հա-
մար կպաշարեն գյուղխորհրդի նախագահին, նրան հնարավորու-
թեան շեն տա ուրիշ ավելի կարևոր ե առաջնահերթ պարտակա-
նութեաններ կատարելու: Գյուղխորհրդի նախագահն ահամայնից
կակսի շտապ-շտապ պատասխաններ տալ, ջղայնանալ, բոլոր
գյուղացիներին ել չի բավարարի, վորն իր հերթին բնակչութեան
մի մասի անբավականութեան պատճառ կդառնա, դանազան բա-
ցատրութեաններ կհարուցի ե այլն: Ահա թե ինչու չափազանց
կարևոր ե աշխատանքի պլանի մեջ նշված ժամկետներն ու կար-
գը պահպանել:

Ինչպէս ամէլի լավ ե բաշխել աշխատանքը խրճիթ-ընթեր-
ցարանի ահտիվի միջև: Դժվար ե այս հարցին պատասխանել բո-
լոր դեպքերի համար: Ամեն ինչ կախված ե նրանից, թե խրճիթ-
վարն ինչ ակտիվ ունի, ե ինչպիսի տեղական պայմաններ կան: Յե-
թե, ասենք, սրամադրութեանդ տակ հինգ մարդ կա, ջոկ բան ե,
տաք կա, այդ ել ջոկ: Շատ բան հենց այդ ակտիվի վորակից ե
կախված, առանձին ընկերների ընդունակութեաններից: Կարող
ե պատահել, վոր տկտիվում լինի յերկու նկարող, յերեք բեմա-
հարդար ե լավ լրագրակարդաց կամ պատի լրագրող՝ վոչ: Այդ
դեպքում խրճիթվարը հարկադրված կլինի զիմել կուսակցական
բջիջին կամ կոմյեբիտմիութեանը, վորպեսզի նրան ընկերներ
տան այն աշխատանքի համար, վորի համար մենք մարդ չու-
նենք:

Լաւադույն դեպքում, յեթե ակտիվը մեծ ե, պարտականու-

թյուններն ակտիվիստների միջև կարելի չե մոտավորապես հե-
տևյալ կերպ բաշխել:

ա) լրագրի կարգացողներ, բ) ազդեցության ուժեղացողներ, գ) խաղի ու պարի կազմակերպիչներ, դ) ռադիստներ և կի-
նո-աշխատողներ, ե) բեմահարդարներ (էստրադիստներ) և ներ-
կայացում կազմակերպողներ, զ) նվագաժողովներ, է) յերգավար-
ներ, ը) նկարողներ (լուսանկարներ, հայտարարություններ և
այլն):

Այն դեպքում, յեթե խրճիթվարին հանձնարարված է տեղե-
կատու աշխատանք տանելու նման մի պատասխանատու գործ,
նա չպետք է բարձիթողի անի խրճիթ-ընթերցարանի վերաբե-
րյալ իր մնացած պարտականությունները, ինչպես այդ հաճախ
յեղել է փորձնական մոբիլիզացիաների ժամանակ: Ճիշտ է, տե-
ղեկատու աշխատանքը խրճիթվարից շատ ժամանակ և ուժ է
խրճ: Դրությունից յեղնելու համար խրճիթվարը պետք է իրեն
լավ ոգնականներ ընտրի իրրև տեղեկատու սեղանի հերթապահ-
ներ: Ավելի լավ է նման ոգնականներ դնել ուսուցիչներից:
Պրճիթվարը պետք է նրանց հիմնավորապես հրահանգի, ապահո-
վի տեղեկատու նյութով և ղեկավարի նրանց հետագա աշխա-
տանքը: Ինքը խրճիթվարը տեղեկատու սեղանի մոտ ներկա յե
լինելու ամենից ավելի պատասխանատու մոմենտներին՝ հավա-
քույթների, միտինգների ժամանակ և այլն:

Ակտիվ ընտրելիս պետք է հաշվի առնել, վոր ակտիվիստ-
ների մեծ մասը զորակոչի յենթակաների թվի մեջ կլինի: Նրանք
գլխար թե հնարավորություն ունենան այդ աշխատանքը տանե-
լու: Սակայն խրճիթվարը պետք է ամեն միջոց գործադրի նրանց
ոգտագործելու, վորովհետև այդ կաղմը մեծապես գերադասելի
յե թեկուզ և չնորհիվ կուտակված փորճի: Բացի այլ
ամեն բաներից, այդ ակտիվը պետք է պատրաստել հավաքավայ-
րի ճանապարհին աշխատելու համար, վորն ե՛լ ավելի լավ կա-
րելի յե կատարել այն պայմանով, յեթե նրանք, հնարավորու-
թյան չափով, ակտիվ կերպով մասնակցեն քաղաշխատանքին մո-
բիլիզացիայի հենց առաջին օրերից:

Ոգտագործելով գորակոչվողների միջից առած ակտիվիստ-
ներին, խրճիթվարը հիմնական հույսը դնելու յե չզորակոչվող
կաղմի վրա, վորն ավելի շատ ժամանակ ունի և վորը զորակոչ-
վածների ղեկուց հետո պետք է աշխատանք տանի գյուղում:
Դրանք են, գլխավորապես, յերիտասարդությունը (մանավանդ

կոճյերիտականներն ու աշակերտությունը) և կանայք (մանա-
վանդ պատգամավորուհիները): Այդ ակտիվը յերբեմն ավելի քիչ
փորճ ունի, ուստի հարկավոր է առանձնապես խնամքով հրա-
հանգել:

Պրճիթ-ընթերցարանի ակտիվի հրահանգումը քաղաքական
աշխատանքի խնդիրների ու բովանդակության հարցերի վերա-
բերյալ կատարում է բջիջի քարտուղարը (կամ գյուղխորհրդի
լիազորը) գյուղական ակտիվի ընդհանուր հրահանգչական խոր-
հրդակցության մեջ: Բացի այդ, խրճիթվարը յուրաքանչյուր
ակտիվիստի հրահանգում է ըստ նրան հանձնարարված աշխա-
տանքի: Յուրաքանչյուր ակտիվիստ պետք է գիտենա, թե ինքն
ինչ աշխատանք է կատարելու, ինչի պետք է ձգտի, յերբ պետք է
կատարվի աշխատանքը, ինչ լարանում, վորտեղ և ինչ մի-
ջոցների ոգնությունը (ձեռնարկներ, նյութեր, թերթիկներ և
այլն): Հրահանգումը պեք է շատ կարճ տևի:

Ուսուցչությունը խրճիթ-ընթերցարանի աշխատանքի համար
մեծ նեցուկ է: Քիչ սխալներ չեն գործվել փորճնական մոբիլի-
զացիայի ժամանակ ուսուցչությունը ներդրավելու գործում:
Ուսուցիչները հաճախ չեյին իմանում, թե ինչ է պահանջվում
իրենցից և իրենք ինչով կարող են ոգտակար լինել: Սպառիչ ցու-
ցումներ նրանք չստացան: Դեպքեր են յեղել, յերբ ուսուցիչնե-
րին ոգտագործել են մանր-մունր բաների համար—ծանուցադրեր
ցրելու, հայտարարություններ փակցնելու և այլն: Այնինչ ու-
սուցիչն իրրև գյուղում ամենից ավելի քաղաքակրթված մարդը,
կարող եր ավելի մեծ ոգուտով ոգտագործվել: Իրրև կանոն, ու-
սուցչին պետք է տեղեկատու աշխատանքի կաղմակերպումը
հանճնել: Այնտեղ, վորտեղ խրճիթ-ընթերցարաններ չկան, ու-
սուցչի վրա, բացի այդ, դրվում է տպագիր նյութեր տարա-
ծելը, լրագրի աշխատանքը, ինչպես և ժամանցի ու գեղարվես-
տական աշխատանքի կաղմակերպումը:

Ի՞նչ անել, յեթե խրճիթվարն ինքն է գորակոչվում: Նա անճ-
նական շատ գործեր կունենա: Այն ժամանակ ո՞վ կկաղմակերպի
խրճիթ-ընթերցարանի աշխատանքը: Նոր մարդ դնել,—գործ
չի չինի, միայն կփչացնի: Յերբեմն ուրիշ յեղ չի լինում, խրճ-
իթվարին առաջարկվում է չարունակել իր աշխատանքը մինչև
գորակոչվածների հետ հավաքավայրը մեկնելը: Ճիշտ է, այս-
տեղ իսկույն ծառանում է փոխարինող պատրաստելու հարցը:
Այն խրճիթվարը, վոր գորակոչի յե յենթակա, դեռ խաղաղ

Ժամանակ պետք է իրեն փոխարինող պատրաստի խրճիթ-ընթեր-
ցարանի ակտիվիստներին: Այն ժամանակ հարցն ավելի պարզ
լուծում կստանա:

ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԱՅՈՆՈՒՄ

Ռայոնական կենտրոններում աշխատանք ավելի շատ կա:
Սորհուրդները և կուսակցության տեղական մարմինները վոչ
միայն պետք է իրենց գյուղում աշխատանք տանեն, այլև ռայո-
նի մեջ մտնող ուրիշ գյուղերի ղեկավարությունն իրականացնեն:
Բացի այդ, սովորաբար ռայոնական կենտրոններում են ստեղծ-
վում գինատարտների հավաքի և ձիերի խմբման վայրերը: Շատ
մարդ է դալիս: Հետևապես յեկողները քաղաքական սպառա-
կումն ել պետք է ավելի լայնորեն դրվի:

Մինչև ուրիշ գյուղերից զորակոչվածները պարտիաների գա-
լը ռայոնական կետի բնակչության մեջ խրճիթ-ընթերցարանի
աշխատանքը գնում է նույն կերպ, ինչպես և մյուս գյուղերում:
Տարբերությունն այն է միայն, վոր ռայոնական խրճիթ-ընթեր-
ցարանը գրադվում է գյուղերին լրագրեր, ազիտացիոն նյութեր
և քաղցուտանկարներ (կինո, չրջիկ ռադիո, մոզական լսարանը և
այլն) հասցնելով: Այդ մասին արդեն խոսել ենք:

Բացի այդ, խրճիթ-ընթերցարանի վրա դրվում է հավաքա-
վայրերի և խմբման կետերի սարքավորումը, նրանց ապահովու-
մը ամեն անհրաժեշտ քաղցուտայրով և խրճիթ-ընթերցարանի
ակտիվից առած աշխատողները կազմով:

Փորձնական մոբիլիզացիաների ժամանակ գրեթե ամենուրեք
այդ աշխատանքի մեջ մեծ թերություն եր այն մանր թվացող
բանը, վոր ազիտացիոն անհաջող տեղն է: Այսպես, մի հավա-
քավայրում ազիտացիոն կազմակերպվել եր հենց վոչ այն շն-
քում, վորտեղ կենտրոնանում եր գորակոչվողների հիմնական
մասսան: Մի ուրիշ գյուղում ազիտացիոն գտնվում եր խրճիթ-
ընթերցարանում, վորը հավաքավայրից 250 մետր հեռու յեր:
Տեղեկատու սեղանների դասավորումը նույնպես անհաջող եր:
Ջարմանալի բան չկա, վոր ազիտացիոն և, մասնավորապես,
տեղեկատու սեղանների ամբողջ աշխատանքն այդ դեպքում վո-
չընչանում եր: Այդ բոլորն ավելորդ անգամ այն է ասում, վոր
ակտիվ ընտրությանը պետք է չափազանց ուշադիր վերաբերվել:

Ռայոնական կենտրոնում աշխատողներ ավելի շատ կան,
քան գյուղում: խրճիթ-ընթերցարանի ակտիվն ավելի բազմա-
թաղ է և ըստ պատրաստվածության ավելի բարձր: Ուստի խր-
ճիթվարին կարելի յե մի ամբողջ շարք պարտականություններից
ազատել: Յեթե գյուղում, որինակ, տեղեկատու աշխատանքն ամ-
բողջությամբ խրճիթ-ընթերցարանի վրա յե դրվում, ռայոնական
կետում խրճիթ-ընթերցարանից պահանջվում է միայն տե-
ղեկատու սեղաններն ապահովել համապատասխան նյութերով ու
ձեռնարկներով: Ռայոնական կետում ռայոնում տեղեկատու աշխա-
տանքի համար հատուկ ընկերներ է ջուկում:

Նույնն է գրեթե նաև պատի թերթի բանը: Յեթե գյուղում
այդ պարտականությունը գրեթե ամբողջությամբ խրճիթվարի
վրա յե դրվում (իրե պատի թերթի խմբագրի), ռայոնական
կետում պատի թերթի հրատարակման համար խմբկուղիկա յե
ստեղծվում, վորն աշխատում է անմիջականորեն ռայոնի ղեկա-
վարությանը: խրճիթ-ընթերցարանն այդ դեպքում միայն խմբ-
կուղիկային ապահովում է բոլոր անհրաժեշտ նյութերով, այն
է՝ թղթով, ներկերով, թանաքով, սոսնձով և այլն: խրճիթ-ըն-
թերցարանի ակտիվը թերթին թղթակիցներ է տալիս:

խրճիթ-ընթերցարանը քաղցուտայրից ազիտացիոն համար
տալիս է ամենից առաջ բավականաչափ զանազան տեղեկատու
նյութեր, ընթերցանության համար մասսայական գրականու-
թյուն, նույնպես և քաղցուտաշխատողները ու ազիտացիոնների
համար ձեռնարկներ:

խրճիթ-ընթերցարանի ամբողջ ակտիվը ազիտացիոն բաց-
ման մոմենտից անցնում է ազիտացիոն սեղանի տրամադրության
տակ և աշխատում է նրա ղեկավարությամբ:

Մի փոքրիկ բրոշյուրում չի կարելի մանրամասն քննել մոբի-
լիզացիոն շրջանի քաղաքական աշխատանքի բոլոր հարցերը:
Դժվար է նույնպես սպասել այդ աշխատանքի այն բոլոր պրակ-
տիկ մոմենտները, վոր խրճիթ-ընթերցարանին են վերաբերում:
Բայց նույնիսկ նախընթաց, բնավ վոչ լրիվ շարադրանքից բոլո-
րովին պարզ է, թե խրճիթ-ընթերցարանների վրա ինչ լուրջ և
բարդ խնդիր է դրվում մոբիլիզացիայի քաղաքական ապահովման
գործում: խրճիթ-ընթերցարաններն այդ խնդրի տակից դուրս
կղան միայն այն դեպքում, յերբ առաջուց, խաղաղ ժամանակ,
որբ-որին անընդհատ, լայն աշխատանք տարվի ամբողջ գյուղա-
կան ակտիվի, իսկ առաջին հերթին խրճիթ-ընթերցարանների

կուտակեցական և կոմյերտական ակտիվի մեջ մոբիլիզացիոն-
քաղաքական գործիչություն տարածելու համար: Վորեն պլան
ունենալը քիչ է: Գործի հաջողության համար ե՛լ ակտիվ կարևոր
է ազադա լարված աշխատանքի համար պատրաստել ամբողջ
անձնակազմը, վորի պարտականությունը կլինի մոբիլիզացիա-
յի ժամանակ քաղաքական աշխատանք տանելը: Վոչ պակաս կա-
րևոր է և խրճիթ-ընթերցարանների ակտիվ մասնակցությունը
աշխատավոր բնակչության լայն մասսաների մեջ մոբիլիզացիոն
գործիչություն տարածելուն: Աճող ռազմական վտանգի հան-
դես մենք ել կոչ ենք անում դիմելու այդ անհետաձգելի և ան-
հրաժեշտ աշխատանքին:

Ց Ա Ն Կ

Պատերազմի սպանալիքը	62
Փորձական մոբիլիզացիա	65
Մոբիլիզացիայի ֆաղափական ապահովությունը	9
Մոբիլիզացիայի ժամանակ ո՞վ է տանում ֆաղափական աշխատանքը	15
Խրճիթ-ընթերցարանների տեղը փորձական մոբիլիզա- ցիաներում	20
Խրճիթ-ընթերցարանը յե՞րբ և ի՞նչ աշխատանք է տանում	23
ա) Մոբիլիզացիայի ազդարարումը	24
բ) Զորակոչվածներին ուղարկելը	27
գ) Զորակոչվածներին ուղարկելուց հետո	29
Խրճիթ-ընթերցարանը մոբիլիզացիայի ժամանակ ի՞նչ միջոցներ ունի	31
ա) Մամուլը և ազիտացիոն նյութերը	31
բ) Տեղեկատու աշխատանքը	35
գ) Պատի քերքը	38
դ) Կինոն և ռադիոն	41
ե) Գրադարանային աշխատանքը	43
զ) Գեղարվեստական աշխատանքները և գվարալիֆ- ները	44
Ի՞նչպես կազմակերպել խրճիթ-ընթերցարանի աշխա- տանքը	46
Խրճիթ-ընթերցարանի աշխատանքների առանձնահատ- կությունները ռադյոնում	52



ՀՀ Ազգային գրադարան



NL0222654

4176. 40 400.

53 206

32-1.
CA 40

800

1
2

ВИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЙ
АКАДЕМИИ НАУК
С. С. С. Р.